

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Մամլոյ Ասուլիսի Մը Յետքերով

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան իր վերջին ասուլիսի ընթացքին բացառապես բազմաթիվ փակագիծեր կապուած Լեռնային Ղարաբաղի հարցով անցեալ տարիներուն տեղի ունեցած բանակցային գործընթացներու հետ: Վարչապետի կարգ մը բացայայտումները, որոնք կը վերաբերին Արցախի կարգավիճակին արժանացան հակազդեցութեան եւ Ստեփանակերտի եւ Երեւանի մէջ:

Տասը տարի Հայաստանի նախագահի աթոռը գրաւած Ռոպերթ Քոչարեան, իր տարեվերջի ասուլիսի ընթացքին վարչապետի խօսքերուն անդրադառնալով ըսած է թէ, «Հայաստանը իր ձեռքերը լուացած է Արցախէն»: Այս խօսքերը արտասանողը եղած է այն մարդը, որ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչները դուրս մղեց բանակցային գործընթացէն, յայտարարելով որ, ինք ըլլալով Ղարաբաղի նախկին նախագահ իրաւունք ունի բանակցելու Արցախահայութեան անունով: Այդ օրէն ասդին, միջազգային ատեններուն մօտ դարաբաղեան հարցը վերածուեցաւ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տարածքային հակամարտութեան, ինքնորոշման իրաւունքը դարձնելով երկրորդական, յատկապէս երբ 2008-ին Պաքու յաջողեցաւ ՄԱԿ-էն ներս վաւերացնել տալ բանաձեւ, ուր ոչ միայն Լեռնային Ղարաբաղը կը ճանաչուէր որպէս Ատրպէյճանի մաս, այլ եւ կը պահանջէր, որպէսզի Հայաստանը իր զօրքերը դուրս բերէ «գրաւեալ տարածքներէն»:

Ներկայ իշխանութիւնները Ձանգեզուրով միջանցք տրամադրելու պատրաստակամութեան մէջ մեղադրող Քոչարեանը, նոյն ասուլիսի ընթացքին հաստատած է որ, ինք եւ Ատրպէյճանի նախկին նախագահ Յէյտար Ալիեւ 2001 թուականին, Միացեալ Նահանգներու հովանաւորութեամբ Քի Ուեսթի մէջ մէկ շաբաթ տեւող բանակցութիւններու ընթացքին համաձայնած են Լաչինով դէպի Հայաստան միջանցքը փոխանակել Սեդրիով դէպի Նախիջեւան միջանցքին հետ: Բնականաբար եօթը շրջանները Ատրպէյճանի վերադարձնելէ ետք:

Իսկ, «իր ձեռքերը Արցախէն լուացած» այսօրուայ իշխանութիւնները այս տարի անճախադէպ՝ աւելի քան 200 միլիոն տոլարի ֆինանսական օժանդակութիւն կը տրամադրէ Արցախի կառավարութեան, պատերազմի հետեւանքները յաղթահարելու եւ Հայութիւնը իր հողին վրայ պահելու նպատակով:

Արցախի Մէջ Պիտի Չընդունինք Ատրպէյճանի Կազմէն Ներս Որեւէ Կարգավիճակ. Արայիկ Յարութիւնեան

«Միայն Արցախի իշխանութիւններն են լիազօրուած խօսելու Արցախի բնակչութեան անունից», յայտարարած է նախագահ Արայիկ Յարութիւնեան՝ անդրադառնալով Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի վերջին յայտարարութիւններուն՝ դարաբաղեան հակամարտութեան վերաբերեալ:

«Արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի լիարժէք ճանաչումը որեւէ վերապահման ու գիշման ենթակայ չէ, եւ այդ հարցի բացառիկ տէրը հենց արցախահայութիւնն է», - իր դիմատետրեան գրառման մէջ նշած է Յարութիւնեան՝ շարունակելով, թէ Արցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման նպատակը «մեր հիմնական ուղենիշն է, եւ դրանից շեղում չի կարող իրեն թոյլ տալ ոչ մի իշխանութիւն»:

«Ուստի, Արցախի ժողովուրդն ու իշխանութիւնները երբեք ու որեւէ կերպ չեն ընդունելու Ատրպէյճանի կազմում որեւէ կարգավիճակ: Ոչ միայն կարգավիճակի, այլ նաեւ ժողովրդագրական առումով վերադարձ անցեալ»



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

Ինչ չի կարող լինել: Ի՞նչ համատեղ բնակչութեան մասին է խօսքը, եթէ Ատրպէյճանը շարունակում է իր հասարակութեանը սնել հայտեացութեամբ եւ պատրաստել ոչ թէ խաղաղութեան, այլ՝ Արցախի հա-

Փաշինեան Մասնակցած է ԱՊՀ Պետութիւններու Ղեկավարներու Ոչ Պաշտօնական Հանդիպման



ԱՊՀ ղեկավարներու հանդիպումի մասնակիցները

Նիկոլ Փաշինեան Սէյնթ Փեթերսպուրկի մէջ մասնակցած է ԱՊՀ (Անկախ Պետութիւններու Համագործակցութիւն) պետութիւններու ղեկավարներու ոչ պաշտօնական հանդիպման, յետոյ ալ ճաշին: Վարչապետի այլ ձեւաչափով հանդիպումներու մասին դեռ տեղեկութիւն չկայ:

ԱՊՀ աւանդական, այս ոչ պաշտօնական գագաթնաժողովի հիմնական դաւը Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներու հարաբերութեան հանդիպումն է: Աւելի վաղ Հայաստանի վարչապետը յայտարարած էր, թէ Իլհամ Ալիեւի հետ

պաշտօնական հանդիպում նախատեսուած չէ, բայց շփում Ալիեւի հետ, Հայաստանի վարչապետը չէ բացառած:

Ինչ կը վերաբերի ԱՊՀ գագաթնաժողովի օրակարգին, աւելի վաղ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ՝ Մարիա Զախարովա յայտարարած էր, թէ ոչ պաշտօնական գագաթնաժողովը նուիրուած կ'ըլլայ առաջին հերթին միջազգային եւ տարածաշրջանային արդի թեմաներու շուրջ

Հայաստանի եւ Թուրքիոյ Բանազնացներու Առաջին Հանդիպումը Տեղի Պիտի Ունենայ Մոսկուայի Մէջ

Հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման համար երկուստեք նշանակուած բանազնացներու առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Մոսկուա, այսօր՝ Դեկտեմբեր 27-ին յայտարարած է Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարար. Մեւլութ Չաւուշօղլու:

«Մեր տպաւորութեամբ, բանազնացներու առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Մոսկուա: Հայկական կողմը նման ցանկութիւն յայտնած է: Բացի այդ, մենք կ'ուզենք, որ հանդիպումէն առաջ ալ կողմերը ուղիղ շփումներ ունենան: Բանազնացները նշանակուած են ուղղակի երկխօսութեան համար», - նշած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը:

Չաւուշօղլու նաեւ նշած է, որ շուտով Երեւան-Պոլիս թուիչքները կը մեկնարկեն: Անոր խօսքերով, կողմերը փոխալցեցութիւններով եւ անմիջական շփումներով պէտք է ճանապարհային քարտէզ մշակեն եւ յստակացնեն յարաբերութիւններու կարգաւորման միտուած քայլերը: Թուրք նախարարը վերստին ընդգծած է, որ այս գործընթացին մէջ Անգարան իր քայլերը կը համակարգէ Պաքուի հետ:

«Մենք կը քննարկենք երկխօսութեան յաջորդ փուլերուն ձեւարկուող քայլերը: Յուսով եմ, որ Հայաստան կը մնայ այս գիծին մէջ, ազդակները դրական են, բայց գործնականօրէն կ'ուզենք տեսնել գայն: Եռակողմ քայլեր կրնան կատարուիլ», - ընդգծած է նախարարը:

Թուրք նախարարի յայտարարութեանն յետոյ Հայաստանի արտաքին գերատեսչութեան խօսնակը հաստատեց, որ կը քննարկուի բանազնացներու՝ Հայաստանի Ազգային ժողովի փոխխօսնակ Ռուբէն Ռուբինեանի եւ Ուաշինկթընի մօտ Թուրքիոյ նախկին դեսպան՝ Սերտար Քըլլըճի հանդիպումը Մոսկուա կայանալու հնարաւորութիւնը: Վահան Յունանեան միեւնոյն ժամանակ նշած է, որ Հայաստանի եւ Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչներու հանդիպման ժամկէտի վերաբերեալ պայմանաւորուածութիւն այս պահուն չկայ:

Չաւուշօղլուին հարց տրուած է թէ արդե՞օք կրնան վերականգնուիլ 2009-ի հայ-թրքական արձանագրութիւնները: Թուրք նախարարը պատասխանած է, թէ արձանագրութիւնները արդէն կորսնցուցած են իրենց նշանակութիւնը, քանի որ այդ գործընթացը անյաջողութեան մատնուեցաւ:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչու է Քոչարեանը Լռում Քի Վեսթի Բանակցութիւնների Ամենակարեւոր Դետալի Մասին

Այսօր հրաւիրուած ասուլիսում Ռոբերտ Քոչարեանն, անդրադառնալով ԼՂ խնդրի կարգաւորման մասնաւորապէս Քի Վեսթի բանակցութիւններին, նշել է.

«Քիվեսթի պայմանագրով Ղարաբաղը միանում էր Հայաստանին մի միջանցքով, որը եւս ունենալու էր նոյն կարգավիճակը, ինչպիսին Ղարաբաղը: Միջանցքի լայնութիւնը պէտք է լիներ «գրադի» հեռահարութեան՝ երկու կողմի վրայ՝ 21-21 միջանցք՝ 42 կմ: Համեմատէք այսօրուայ վիճակի հետ, այսօրուայ Ղարաբաղի անորոշութեան եւ կարգավիճակի հետ: Տարբերութիւնը դրա մէջ է: Դուք չէ՞ք տեսնում այդ տարբերութիւնը»:

Քոչարեանը նշել է, որ այս տարբերակը չի իրագործուել, քանի որ Ատրպէյջանը վերջին պահին հրաժարուել է:

Նկատենք, որ թէեւ Արցախը Հայաստանի Հանրապետութեանը կապող 20 քիլոմետր լայնքով միջանցքը դառնում էր հայկական տարածք, սակայն այդ 20 քիլոմետրանոց լայնքով տարածքը վերածուել էր քառակուսի մետրերի եւ նախկին ԼՂԻՄ-ի ծայրամասից նոյնքան տարածք /բացի 7 շրջանները/տրուում էր Ատրպէյջանին: Այս՝ չափազանց կարեւոր դետալի մասին Քոչարեանը չգիտես ինչու՝ չի ուզում բարձրաձայնել:

Ի դէպ, այս բանակցութիւնների բովանդակութեան մանրամասներին մասին բազմաթիւ հրապարակումներով հանդէս է եկել լրագրող Թաթուլ Յակոբեանը:

Այն, որ խորհրդարանում մեծութեամբ առաջին ընդդիմադիր ուժը՝ «Հայաստան» դաշինքը չունի այլ անելիք, քան ՀՀ-ում մասնաւորապէս պատերազմից յետոյ

հաստատուած իրաւա-քաղաքականաստատու քուռոյի հետ հաշուի նստելն ու դրան համակերպուելը, լրացուցիչ անգամ ապացուցուեց յիշեալ դաշինքի կուրատոր, պաշտօնաթող նախագահ Ռոբերտ Քոչարեանի այսօրուայ ասուլիսում:

Խորհրդարանի անցած մի քանի ամիսների գործունէութիւնը ցուցանում են, որ վերոյիշեալ դաշինքի անելիքը ոչ թէ իր նախընտրական ծրագրի՝ տեղ-տեղ հոգեզմայլ դրոյթների իրագործումը Աժ օրակարգ ներառելն է, ժողովրդական լեզուով ասած՝ իր իսկ՝ ժողովրդի մատից փուշ հանելը կամ գոնէ այդ փուշը հանելու գործին նպաստ բերելը, այլ ամէն ինչ անելը՝ առկայ ստատու-քուռոյ խախտելու ու այդ ալիքի վրայ իշխանութիւնը գաւթելու համար:

Իսկ դրան հասնելու ճանապարհին դաշինքը, ինչպէս վերահաստատեց Քոչարեանը, կը շարունակի կիրառել հանրութեանն արդէն քաջ յայտնի գործիքները՝ իշխանութեան վարկանիշը «մինչեւ քոք» մաշեցնելուց մինչեւ դիմադրութեան զարմանազան շարժումներ ձեւաւորելը: Փաստենք, որ միակ օրակարգը, որը յամառօրէն առաջ է տարել «Հայաստան» դաշինքը անցած չորս ամիսների ընթացքում, դաշինքի պատգամաւոր Արթուր Ղազինեանի թեկնածութիւնը Աժ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերի յանձնաժողովի փոխնախագահի պաշտօնում հերթական անգամ առաջադրելն ու մերժուելն է եղել: Թէ ում վարկանշն է այս՝ լուրջ, բայց յամառ դիմադրութեան հետեւանքով մաշուել՝ թողնում ենք ընթերցողի դատին:

Մինչ պաշտօնաթող նախա-

զահի՝ ասուլիսում հնչած նրա որոշ մեկնաբանութիւնների անդրադառնալը՝ հերթական անգամ ֆիքսենք, որ ՀՀ-ն արդէն մէկ տարուց աւելի է՝ ապրում է մի ուժիմում, որը հաստատուել է պատերազմի աւարտից եւ դրա հետեւանքով ի յայտ եկած փաստաթղթերի՝ մասնաւորապէս Նոյեմբերի 9-ի եռակողմ յայտարարութեան արդիւնքում:

Հենց պատերազմի ելքի ու վերոյիշեալ փաստաթղթի բովանդակութեան շահարկման հետեւանքով էլ ներքաղաքական ճգնաժամը հասաւ ծայրայեղ աստիճանի, որը լիցքաթափելու համար Յունիսի 20-ին տեղի ունեցան Աժ արտահերթ ընտրութիւններ ու ձեւաւորուեց այսօրուայ խորհրդարանը:

Ակնյայտ է՝ որ քաղաքական ուժն էլ այդ ընտրութիւնների արդիւնքում իշխանութիւն ձեւաւորէր, շարունակելու էր հաշուի նստել յետպատերազմական իրավիճակի հետ ու գործել Նոյեմբերի 9-ից յետոյ սահմանուած ուժիմում: Քոչարեանն ու իր թիմը, որոնք ամիսներ առաջ նախընտրական քարոզչութիւնը կառուցել էին իրենց կողմից «չարաբաստիկ» որակուած յայտարարութեան բովանդակութեան շուրջ՝ ընդհուպ շահարկելով դրա կէտերի յաջորդականութիւնը /դիցուք՝ ինչու է գերիններին վերաբերող կէտը նախավերջինը/, այսօր յետին թուով ստիպուած են խոստովանել, որ իրենք էլ գործում են վերոյիշեալ ուժիմում ու փաստաթուղթը չեղարկելը առնուազն արկածախնդրութիւն է:

Պատասխանելով հարցին, որ եթէ իրեն յաջողուի իշխանութեան գալ, արդեօք առ ոչինչ կը ճանաչի՞ Նոյեմբերի 9-ի փաստաթուղթը՝

Քոչարեանն ասել է. «Նայէք՝ Նոյեմբերի 9-ի փաստաթղթի կէտերը, ինչ վատ բան կայ՝ արդէն կատարուած է: Ես կը գամ իշխանութեան, թէ Պողոսը կամ Պետրոսը, կապ չունի, որեւէ ողջամիտ մարդ չի գալու եւ չի ասելու՝ չեղարկենք այս փաստաթուղթը: Իրականացուած են բոլոր կէտերը, բացի մի կէտից, որը մեզ էր պէտք՝ գերինների վերադարձի վերաբերեալ կէտը: Մենք եթէ չեղարկենք այդ փաստաթուղթը, մեզ մեղադրելու են ասեն՝ գերիններին չեն ուզում վերադարձնել, որովհետեւ դա միակ իրական փաստաթուղթն է»:

Ողջունելով Քոչարեանի՝ հագուադէպ հանդիպող ողջամիտ ձեւակերպումներից մէկը՝ «որեւէ ողջամիտ մարդ չի գալու եւ չի ասելու՝ չեղարկենք այս փաստաթուղթը», միաժամանակ նկատենք, որ պաշտօնաթուղթի ու սպեկուլիտացիայի է դիմում՝ պնդելով, թէ «իրականացուած են բոլոր կէտերը, բացի մի կէտից, որը մեզ էր պէտք՝ գերինների վերադարձի վերաբերեալ կէտը»: Անվիճելի է, որ թէեւ գերինների վերադարձին վերաբերող կէտը կարելոք եւ մինչեւ վերջ չկատարուած կէտերից է, որն, ի դէպ, լիուրի շահարկուեց ու շարունակուած է շահարկուել քարոզչական նպատակներով, բայց եւ այնպէս, յայտարարութիւնն ունի դեռեւս չիրականացուած մէկ այլ կէտ եւս՝ 9-րդը:

Շաբ.ը էջ 15

Արցախի Խորհրդարանը Շանտաժի եւ Քաղաքականութեան Գամփաբաժանում

ՅԱԿՈԲ ԲԱՐԱԵԱՆ

«Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը, վերահաստատելով Արցախի ժողովրդի եւ իշխանութիւնների դիրքորոշումը Արցախի Հանրապետութեան ինքնիշխանութեան եւ անկախութեան հարցում, յայտարարում է՝ անընդունելի է առանց Արցախի իշխանութիւնների տեսակէտը հաշուի առնելու դիրքորոշում յայտնելը, քանի որ Արցախի ապագայի հարցով որոշում ընդունելու իրաւասութիւն ունեն միայն Արցախի Հանրապետութեան քաղաքացիների կողմից ընտրութիւնների միջոցով ձեւաւորուած իշխանութիւնները»: Այդպէս է եզրափակուած Արցախի հանրապետութեան խորհրդարանի յայտարարութիւնը, որ ընդունուել է Դեկտեմբերի 27-ի արտահերթ նիստում եւ որն ըստ էութեան պատասխան է Հայաստանի վարչապետի յայտարարութիւնների, որ արցախեան հարցի, բանակցային ժառանգութեան վերաբերեալ նա արել էր Դեկտեմբերի 24-ի ասուլիսում:

Արցախի խորհրդարանի ուժերը միանգամայն ունեն այդ յայտարարութիւնների քննադատութեան, դրանց թեմայի վերաբերեալ սեփական կարծիքի եւ քաղաքական գնահատականի իրաւունք:

Ի վերջոյ, հենց դրա համար են նրանք մօտ երեսուն տարի Արցախի քաղաքական ուժ, Արցախի խորհրդարան, արցախեան քաղաքական դաշտ: Եւ այստեղ է գլխաւոր հարցը՝ ինչու՞ են նրանք այդ մօտ երեք տասնամեակից վերջին մօտ երկու տասնամեակը հիմնականում աչքի ընկել ոչ թէ քաղաքականութեամբ, այլ լուռութեամբ: Առաւել էս, երբ Արցախի քաղաքական ուժերը թերեւս տեղեակ են եղել բանակցային գործընթացի այն ոչ շահեկան տրանսֆորմացիայից, որ ներկայացրել է Նիկոլ Փաշինեանը Դեկտեմբերի 24-ին: Ի հարկէ այս պարագայում ժամանակ չծախսենք այդ հարցադրումը անելու համար՝ «թէ ինչու՞ է չին խօսում Սերժի ժամանակ»: Այդ «ստանդարտ» յետեղափոխական ձեւակերպման տեղը եւ ժամանակը չէ:

Ամբողջ հարցն այն է, որ Արցախի խորհրդարանը ներկայիս յայտարարութիւնից յետոյ ուղղակի պարտաւոր է զբաղուել քաղաքականութեամբ: Իսկ քաղաքականութեամբ զբաղուելն էլ պարզապէս Արցախի խորհրդարան լինելու պատգամաւորական մանդատի սոցիալական հմայքը տնօրինելը է: Արցախի խորհրդարանը կատարել է մի քայլ, որի կոնցեպտուալ շարունակութեան բացակայութեան պարագայում այդ քայլը

դառնում է Հայաստանի քաղաքական ղեկավարութեան հասցէին պարզ շանտաժ, ոչ աւելին, ինչպիսին օրինակ իրենց թոյլ են տալիս Ատրպէյջանը կամ այլ արտաքին խմբեր: Արցախեան քաղաքական սուբիեկտութիւնը Հայաստանի քաղաքական ղեկավարութեան յայտարարութիւնների «մոնիտորինգը» եւ ստացուած արդիւնքից բխող լուռութիւնը կամ դժգոհ յայտարարութիւնը չէ, այլ արցախեան հարցի բարդ գործընթացում սեփական շահերի սպասարկմանն ուղղուած քաղաքական բովանդակութեան մշակումն ու միջազգայնացման ջանքը, որը կարող է մի կողմից հետաքրքիր լինել առնուազն միջնորդ երկրների համար, միւս կողմից նրանց համար ձեւաւորել Արցախի ժողովրդի տարրական իրաւունքների հանդէպ պատասխանատուութեան նոր միջավայր: Հասկանալի է, թէ ինչու՞ են հիմնականում լուել Սերժ Սարգսեանի կամ Ռոբերտ Քոչարեանի նախագահութեան շրջանում: Լուել են, որովհետեւ դա էր Հայաստանում ձեւաւորուած քրէսօլիգարխիկ համակարգի շահառուի կարգավիճակ ստանալու գինը: Այդ համակարգը կայացրել էր իր ընտրութիւնը, որ ամէն ինչի գինը պէտք է վճարեն Հայաստանն ու Արցախը:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁՊԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
 ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Կը քննարկուի Երասխը Սադարակին Կապող Երկաթուղագիծի Վերագործարկումը. Միեր Գրիգորեան

Մինչեւ երկաթուղագիծի Մեղրիի, այնուհետեւ Հորադից տանող հատուածներու կառուցումը, այժմ կը քննարկուի Երասխը ատրպէյճանական Սադարակին կապող երկաթուղագիծի քանի մը հարիւր մեթրի վերագործարկումը, ինչ որ թոյլ կու տայ Հայաստանը երկաթուղագիծով կապել Իրանին, «Ազատութեան» հարցին ի պատասխան ըսած է փոխվարչապետ՝ Մհեր Գրիգորեան:



Փոխվարչապետ՝ Միեր Գրիգորեան

ցումը կ'արժէ մօտ 200 միլիոն տոլար, շինարարութիւնը կը տեւէ մինչեւ երեք տարի: Սակայն ո՛չ նախորդ շաբաթ եւ ո՛չ ալ այսօր փոխվարչապետը չչստակացուց, թէ երբ պիտի սկսի երկաթուղագիծի հայաստանեան հատուածի շինարարութիւնը:

Մինչդեռ, Հորադիցէն դէպի Հայաստան երկարող մօտ հարիւր քիլոմեթրոց երկաթուղագիծի կառուցման աշխատանքները Ատրպէյճանի մէջ սկսած են այս Փետրուարին: Պաքուն ծրագրած է աւարտել վաղն մինչեւ 2023-ի վերջը, ինչպէս օրերս տուած հարցազրոյցին նշած էր Ատրպէյճանի ղեկավարը:

«Անկեղծ ասած՝ մենք նման ցանկութիւն ունենք, եւ ի հարկէ, ցանկացած հնարաւորութիւն ապաշրջափակման, որը հնարաւոր է իրականացնել այսօր գործող ենթակառուցուածքների շնորհիւ, ի հարկէ, ցանկալի է, որ տեղի ունենայ, բայց անկեղծ ասած՝ բնականաբար, դա բանակցութիւնների առարկայ է, եւ ասել միանշանակ, որ դա տեղի կ'ունենայ, կամ նոյն վրաստանի հատուածը տեղի կ'ունենայ անմիջապէս, եւ հիմա չեմ կարող ասել, որովհետեւ այո, բանակցութիւններում դա կայ, բայց ինչ վերջնական համաձայնութեան կու գանք, դեռեւս չեմ կարող ասել», - մանրամասնեց փոխվարչապետը:

Գրիգորեան, որ կը ներկայացնէ Հայաստանը Ռուսաստանի միջնորդութեամբ գործող եռակողմ՝ Ատրպէյճանի հետ միասին փոխվարչապետներու աշխատանքային խումբին մէջ, անցեալ շաբաթ «Ազատութիւն»ին հարցրած էր, որ Մեղրիի հատուածին 45 քիլոմեթրոց երկաթուղագիծի կառու-

Հրաչեայ Սարգսեան Ընտրուեցաւ Երեւանի Քաղաքապետ

Երեւանի աւագանին 44 կողմ, 10 դէմ ձայնով քաղաքապետ ընտրեց Հրաչեայ Սարգսեանը, որ մինչ այդ կը գրաւէր փոխքաղաքապետի պաշտօնը: 3 քուէաթերթիկ անվաւեր եղած է:



Նորընտիր քաղաքապետ Հրաչեայ Սարգսեան

Աւելի վաղ՝ աւագանիի արտահերթ նիստին, աւագանին անվատահուժիւն յայտնեց արդէն նախկին քաղաքապետ Հայկ Մարութեանին:

Վերջինս յայտարարեց, որ իրեն պաշտօնանկ ընելու «Իմ քայլի» նախաձեռնութեան պատճառը այն է, որ ինք մէկ տարի առաջ լքած է «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը:

«Իմ քայլը» աւելի վաղ յայտարարած էր, որ քաղաքական ճգնաժամ առաջացած է: Երէկ ալ խմբակցութիւնը տապալեց Երեւանի աւագանիի հերթական նիստը՝ այս քայլը բացատրելով աւագանիի եւ քաղաքապետի միջեւ քաղաքական ճգնաժամով:

Նորընտիր քաղաքապետը 2018-ի Սեպտեմբեր 23-ին կայացած Երեւանի աւագանիի արտահերթ

ընտրութիւններով «Իմ քայլը» կուսակցութիւններու դաշինքի համամասնական ցուցակով ընտրուած է աւագանիի անդամ: 2018-ի Հոկտեմբերին նշանակուած է քաղաքապետի առաջին տեղակալ: Եղած է «Առաքելութիւն» կուսակցութեան անդամ:

ՀՀ-ի Մէջ Առաջին Անգամ Գործարկուած Է Բարեվարքութեան Ստուգման Գործընթաց

«Քրուակիցիայի դէմ պայքարը դիտարկուել է որպէս ՀՀ կառավարութեան առաջնահերթութիւններից: Յանձնաժողովը 2020 թուականից, որպէս արդէն գործող մարմին, սկսել է իրականացնել իր աշխատանքները մի շարք ուղղութիւններով», - այսօր՝ Դեկտեմբեր 28-ին, «Մեդիա կեդրոն»-ի մէջ Քրուակիցիայի կանխարգիլման յանձնաժողովի արձանագրած արդիւնքներու վերաբերեալ 2021 թուականը ամփոփելու ատեն նշեց յանձնաժողովի նախագահ՝ Հայկուհի Յարութիւնեան եւ աւելցուց, որ կը պատրաստուին ներկայացնել առևուստ 6 հիմնական ոլորտային քաղաքականութիւններու արդիւնքները: Յարութիւնեանի խօսքով՝ հա-

մակարգուած է յայտարարագրման գործընթաց, եւ անոր հետ կապուած օրէնսդրական փոփոխութիւններ կատարուած են:

«Ներդրում են կառավարման ոլորտում քրուակիցիան կանխարգելելու եւ վերահսկելու նոր մեքենակառուցութիւններ, ինչպէս նաեւ ՀՀ-ում առաջին անգամ ներդրուել եւ յստակ պաշտօնների համար գործարկուել են բարեվարքութեան ստուգման գործընթացը եւ դրա արդիւնքները: Յանձնաժողովը աշխատել է նաեւ յստակ հանրային ծառայողների վարքագծի վերահսկման եւ այդ ոլորտում եւս բարեվարքութեան հաստատման ուղղութեամբ», - նշեց յանձնաժողովի նախագահը:

Մայրը Նարեկ Երիմեան Կալանաւորուած Է

Վայոց ձորի սահմանային հատուածէն Նոյեմբերի կէսերուն գերեվարուած, ապա Դեկտեմբերի սկիզբը հայրենադարձուած մայրը Նարեկ Երիմեան վերաքննիչ դատարանի որոշմամբ կալանաւորուած է: Աւելի վաղ առաջին ատենի դատարանը մերժած էր գինուորականը կալանաւորելու Քննչական կոմիտէի միջնորդութիւնը: Իրաւապահները Երիմեանը կը մեղադրեն մարտական ծառայութեան կանոնները խախտելու համար: Նոյեմբեր 16-ի մարտերու ընթացքին գերեվարուած, ապա հայրենադարձուած արդէն հինգերորդ գինուորականն է, որ կը կալանաւորուի նոյն մեղադրան-

քով: Քննչական կոմիտէին «Ազատութիւն»-ին յայտնած են, որ մարտական հերթափոխութիւն կատարող դիրքերու գինծառայողները, տեղեկանալով հակառակորդի յարձակման մասին, ունենալով գէնք կիրառելու իրաւասութիւն, մարտական դիրքի վրայ յարձակող հակառակորդի գինծառայողները վնասագրեծելու, գինթափելու փոխարէն փորձած են բանակցութիւններ վարել անոնց հետ: Ապա, թողած են մարտական դիրքերը եւ դիմած փախուստի, որու հետեւանքով Ատրպէյճանի գինուստի ուժերը ներխուժած են Հայաստանի ինքնիշխան տարածք:

Մշակոյթի Նախկին Նախարարին Ու Իսրայէլի Սօս Նախկին Դեսպանին Առնչուող Քրէական Գործի Նախաքննութիւնը Աւարտած Է



Մշակոյթի նախկին նախարար՝ Յասմիկ Պողոսեան եւ Իսրայէլի սօս նախկին դեսպան՝ Արմէն Սմբատեան

Երեւանի կեդրոնը գտնուող ԱՕԿՄ-ի յայտնի շէնքի գործով նախաքննութիւնը աւարտած է, յայտնած է Քննչական կոմիտէին:

Արմէան փողոցի սկզբնամասը՝ Հանրապետութեան հրապարակէն ոչ հեռու գտնուող այս շէնքին մէջ կը գործէ «Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային համագործակցութեան» կազմակերպութիւնը: Քննչական կոմիտէի կողմէ քննուող գործը կը վերաբերի շէնքի հողատարածքի օտարման ու սեփականաշնորհման:

Աւելի վաղ ՔԿ-ն հարցրած էր, որ հասարակական կազմակերպութեան նախագահութեան անդամ Գոռ Դաւթեան, ինչպէս նաեւ նոյն ՀԿ-ի կողմէ հիմնադրուած «ԱՕԿՄ» ընկերութեան տնօրէն, ՀԿ-ի նախագահ, Իսրայէլի մօտ նախկին դեսպան՝ Արմէն Սմբատեան եւ առաջին փոխնախագահ, մշակոյթի նախկին նախարար՝ Յասմիկ Պողոսեան, գոչքի ծագման աղբիւրն ու պատկանելիութիւնը թաքցնելու եւ խեղաթիւրելու նպա-

տակով, կատարած են ձեւական օտարման գործարքներ եւ ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասը ձեւական գործարքով օտարած են Բրիտանական Վիրժինեան կղզիները գրանցուած ընկերութեան, որու տնօրէնը հանդիսացած է Պողոսեանի որդիին կինը՝ Յրանչեսաքա Քուրթրուկին: Ան իր հերթին 100 տոկոս բաժնեմասի 50 տոկոսը վաճառած է Արմէն Սմբատեանի ընկեր Սարգիս Մարտիրոսեանին եւ Գոռ Դաւթեանի մօր:

Քրէական գործով մեղադրեալներ Արմէն Սմբատեանի եւ Գոռ Դաւթեանի մասով նախաքննութիւնը աւարտած է, եւ քրէական գործը մեղադրական եզրակացութեամբ ուղարկուած է դատախազութիւն՝ դատարան ուղարկելու միջնորդութեամբ: Իսկ միւս մեղադրեալ Յասմիկ Պողոսեանի մասով նախաքննութիւնը կը շարունակուի, վերջինիս նկատմամբ դեռ 2020-ի Դեկտեմբերէն յայտարարուած է հետախուզում, եւ խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը:

ԼՈՒՐԵՐ

2016-ին Բանակցային Գործընթացին Մեջ Տեղի Ունեցած Է Աղէտ. Փաշինեան



Վարչապետ Նիկոլ Փաշինեան առցանց մամուլի ասուլիսի ընթացքին

Դեկտեմբեր 24-ին, ՀՀ առցանց ձեռնարկով մամուլի ասուլիսի ընթացքին, Արցախի տարածքներու ապագա մասին հարցին անդրադառնալով, վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսաւ, որ պէտք է հանրութեան ներկայացնել այս հարցի բոլոր շերտերը:

«Պատասխանելու համար, ուշադրութիւն եմ հրաւիրելու մի հարցի վրայ, որը, գուցէ, չկարողանամ մինչեւ վերջ բացել՝ մի շարք նկատառումներով: Բանակցային ողջ գործընթացի ընթացքում, երբեք, ոչ մի անգամ չի վիճարկուել Լեռնային Ղարաբաղում ապրած ատրպէյճանցիների իրաւունքների հարցը՝ ոչ մի իշխանութեան կողմից: Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը բանակցային գործընթացում երբեք չի դիտարկուել որպէս գոտ եւ միայն հայկական միաւորում: Բանակցային փաստաթղթերում արձանագրուած է, որ ԼՂԻՄ-ում ապրել են նաեւ ատրպէյճանցիներ, եւ նրանց իրաւունքների պաշտպանութիւնը եղել է բանակցային թեմայի մէջ: Քանիցս խօսել եմ այն մասին, որ այն բանակցային գործընթացի մէջ, որտեղ խօսուում էր Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ճշգրտման համար նախատեսուող հանրաքուէի մասին, խօսք էր գնում ԼՂ ողջ բնակչութեան մասին, ինչը նշանակում է, ոչ միայն հայկական բնակչութիւն: Ես նախկինում, մի քանի անգամ բանակցային գործընթացում գոյութիւն ունեցած բանակցային բովանդակութեան իմ ունեցած վերապահումներն արտայայտելիս ասել եմ, որ ենթադրենք՝ այդ հանրաքուէն պէտք է տեղի ունենար, իսկ հանրային մեկնաբանութեամբ տեղի չէր ունենալու երբեք, բայց ենթադրենք հայկական մեկնաբանութեամբ պէտք է տեղի ունենար, հայկական կողմը երբեք չի ժխտել, որ այդ հաւանական հանրաքուէին պէտք է մասնակցէին նաեւ Լեռնային Ղարաբաղի ատրպէյճանցիները: Ենթադրենք ատրպէյճանցիները պէտք է մասնակցէին այն չափով, որ չափով մեկնաբանում է հայկական կողմը: Հիմա, երբ ինքնորոշման իրաւունքը, ենթադրենք, իրացուում էր

հայկական կողմի մեկնաբանութիւնների շրջանակում, հարց է ծագում, իսկ Լեռնային Ղարաբաղի ատրպէյճանցիները այդ համաթեքսթում, իրենք էլ իրենց հերթին կարող էին արդեօք բարձրացնել իրենց ինքնորոշման սկզբունքը: Ես խօսում եմ եղած բանակցային բովանդակութեան նրբութիւնների մասին, որոնք հանրայնորէն երբեք չեն քննարկուել: Այս համաթեքսթում ԼՂԻՄ-ի ամբողջականութեան ի՞նչ պատկեր պէտք է արձանագրուել: Այսօր հնչում են մտքեր, որոնք, իրականում, 2018 թուականի բանակցային բովանդակութեան հետ ոչ մի կապ չունեն: Երբ ասում եմ՝ 2016 թուականին բանակցային գործընթացում տեղի է ունեցել աղէտ, հենց այս համաթեքսթը նկատի ունեմ, որը մի շերտանի չէ: ԼՂԻՄ-ը արձանագրուել է հայկական եւ ատրպէյճանական միաւորում՝ առնուազն բնակչութեան մասով», - ըսաւ Նիկոլ Փաշինեան եւ նշեց, որ ատրպէյճանցի բնակիչներ կը նշանակէ, որ այդ մարզիկ ԼՂԻՄ-ի մէջ բնակելու իրաւունք ունեցած են: Փաշինեան նշեց նաեւ, որ պատերազմին յետոյ համանախագահները օրակարգ ձեւաւորած են, որ մեզի համար ընդունելի է: Անդրադառնալով պատերազմը կանխելու հնարաւորութեան, վարչապետը ըսաւ, որ ցանկացած պատերազմ հնարաւոր է կանխել, բայց այդ գին ունի: «Այս պատմութեան մէջ ինձ ուղղուած բազմաթիւ մեղադրանքներ կան, բայց ես ուզում եմ ասել, թէ որը կարող է լինել ինձ ուղղուած ամենաօրինական մեղադրանքը: Ինձ մեղադրում են նրանում, որ յանձնել եմ հողեր: Սա անհիմն է, բայց ինձ կարող են մեղադրել հողերը չչանձնելու մէջ, եւ սա կարող է լինել օրինական մեղադրանք: Եթէ որեւէ մէկը ինձ ասի, որ «դու պէտք է հասկանայիր, որ տարբերակ չկայ, պէտք է յանձնել այդ տարածքները, որպէսզի պատերազմ չլինի, դա կը լինի օրինական մեղադրանք: Բայց չեմ յանձնել ինչի՞ համար, իսկ ի՞նչ եմ ստանում դրա դիմաց՝ ըստ էութեան ոչինչ», - ըսաւ Նիկոլ Փաշինեան:

Փաշինեան Մասնակցած Է

Շարունակուած էջ 1-էն
դիրքորոշումներու համակարգման եւ անցնող տարուայ արդիւնքներու ամփոփման:

Պաշտօնական Մոսկուան վերջերս յայտարարած էր, թէ ՆԱԹՕ-ի հետ այս խոր քաղաքական առձակատման հարցով մինակ չէ, այլ պիտի գործէ յետխորհրդային եր-

Մոսկուան Պիտի Շարունակէ Աջակցիլ Կողմերուն Առաջնորդուելով Սոչիի Զամաձայնութիւններով. Զախարովա

«Մոսկուան կը համարէ, որ Պաքու եւ Երեւան ընդհանուր առմամբ կը կատարեն եռակողմ պայմանաւորութիւնները: Մոսկուան պիտի շարունակէ աջակցիլ կողմերուն, անոնց կարգին՝ սահմանազատման եւ սահմանազօման հարցով՝ առաջնորդուելով Նոյեմբեր 26-ի եռակողմ պայմանաւորութիւններով», - ըսած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Մարիա Զախարովան



Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութեան խօսնակ՝ Մարիա Զախարովա

«Հայ-ատրպէյճանական սահմանի սահմանազատման եւ սահմանազօման հարցով կ'առաջնորդուինք Նոյեմբեր 26-ի Սոչիի համաձայնութիւններէն եւ կ'աշխատինք սահմանազատման հարցով հայ-ատրպէյճանական երկկողմանի յանձնաժողով ստեղծելու ուղղութեամբ՝ կողմերու ցանկութեամբ մեր երկրի խորհրդատուական աջակցութեամբ», - մեկնաբանելով սահմանազատման եւ սահմանազօման հարցով եւրոպացի մասնագէտներու մասնակցութեան մասին Եւրոպական խորհուրդի ղեկավար՝ Շարլ Միշէլի յայտարարութիւնը, ըսած է Մարիա Զախարովա: «Միեւնոյն ժամանակ մենք կ'ողջունենք երկկողմանի յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած միջազգային ջանքերը:

Հայ-թրքական Յարաբերութիւններու Հարցով Անգարա Կը Համակարգէ Ատրպէյճանի Հետ. Պայրամով

Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Ճէյհուն Պայրամով անդրադարձած է Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման, յայտնած են Պաքուի Զանգուածային լրատուական միջոցները: Անոր խօսքով, Պաքու լիովին կ'աջակցի Անգարայի եւ Երեւանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման: Պայրամով յիշեցուցած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարի յայտարարութիւնը այն մասին, որ հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման հարցով Անգարան գործողութիւնները կը համակարգէ Ատրպէյճանի հետ: «Եթէ մենք կը խօսինք երկիրներու միջեւ յարաբերութիւններու կարգաւորման մասին, ապա այն պէտք է ունենայ միջազգային իրաւունքի նորմերուն ու սկզբունքներուն համապատասխանող հիմք: Մենք այս հիմքով կը զարգացնենք



Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Ճէյհուն Պայրամով

նաեւ մեր հարեւաններու հետ յարաբերութիւնները: Հիմա մենք Երեւանին առաջարկած ենք յարաբերութիւնները կառուցել միջազգային իրաւունքի հիման վրայ», ըսած է Ճէյհուն Պայրամով:

կիրներու եւ ՀԱՊԿ-ի ծիրէն ներս՝ իր դաշնակիցներու հետ միասին: Այսինքն՝ ՆԱԹՕ-Ռուսաստան, Ռուսաստանի եւ Ուքրանիոյ միջեւ առկայ լարուածութիւնը, ամենայն հաւանականութեամբ, պիտի քննարկուէր այսօր՝ ոչ պաշտօնական այս հանդիպման: Յետխորհրդային երկիրներէն որեւէ մէկը, բացառութեամբ Պելառուսիոյ նախագահին, ՆԱԹՕ-Ռուսաստան հակամարտութեան շրջածիրէն ներս Ռուսաստանին աջակցելու մասին յայտարարութիւն չէ ըրած: Իսկ Ալեքսանդր Լուքաշենքոյին որպէս Պելառուսիոյ օրինական նախագահ Արեւմտքը չի ճանչնար: Քննարկումները ԱՊՀ գագաթնաժողովի ընթացքին մեծ մասամբ

անցած են փակ դռներու ետեւ: Բաց քննարկումները կը վերաբերէին «Քորոնա» ժահրի դէմ պայքարին ուղղուած ընդհանուր ջանքերուն: ԱՊՀ անդամ երկիրներու ղեկավարները, մասնաւորապէս, Թուրք-մենիստանի նախագահը շնորհակալութիւն յայտնած է ռուսական կողմին գործուն աջակցութեան համար՝ շեշտելով, թէ Ռուսաստանի տրամադրած մեթոտաբանութեան եւ պատուաստներու շնորհիւ կը յաջողուի համավարակը վերահսկողութեան տակ պահել: Համավարակի դէմ պայքարի վերաբերեալ քննարկումներն յետոյ վլատիւնի ֆուլիին յայտարարեց, որ այլ հարցերու շուրջ քննարկումը կը կատարեն փակ ձեւաչափով:

Պարու Բողոքի Նամակ Յղած Է Փարիզին՝ Վալերի Փեքրեսի Արցախ Այցի Պատճառով

Պաքու բողոքի նամակ յղած է Փարիզին՝ Ֆրանսայի նախագահի պաշտոնին յաւակնող Վալերի Փեքրեսի Ստեփանակերտ կատարած այցի պատճառով: Այս մասին ըստուած է Ատրպէյճանի Արտաքին գործոց նախարարութեան տարածած հաղորդագրութեամբ:

Այնտեղ հաղորդուած է, որ դիւանագիտական գերատեսչութիւն կանչուած է Ատրպէյճանի մօտ Ֆրանսայի գործերու ժամանակաւոր հաւատարմատարը «եւ անոր ալ յղուած է բողոքի նամակը»: «Նախընտրական քարոզարշաւի ծիրէն ներս Ֆրանսացի քաղաքական գործիչներու եւ այլոց ուղեկցութեամբ տեղի ունեցած այդ այցը ուղղուած է Ատրպէյճանի ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան եւ կը հանդիսանայ երկրի ազգային օրէնսդրութեան խախտում», - ըստուած է պաշտօնական Պաքուի յայտարարութեամբ:

Ֆրանսայի Հանրապետական կուսակցութեան կողմէն նախագահի պաշտօնին առաջադրուած Փեքրես, ինչպէս հաղորդուած է, Լեռնային Ղարաբաղ այցելած է նախօրէին, մինչ այդ ան երեւանի մէջ



Ֆրանսայի նախագահի թեկնածու Վալերի Փեքրես

հանդիպումներ ունեցած է նախագահի եւ խորհրդարանի խօսնակին հետ: Իլ-տէ-Ֆրանս շրջանի ղեկավարը Ֆրանսայի նախագահի պաշտօնին յաւակնող երկրորդ թեկնածուն է, որ քարոզարշաւի ժամանակ կ'այցելէ Հայաստան: Շաբաթներ առաջ երեւան ժամանած էր էրիք Զեմուր, որ նոյնպէս կը ցանկացէր պաշարել էլիզէի պալատի ղեկավարի պաշտօնին համար:

Հայաստանի Գիտութեան Եւ Արհեստագիտական (FAST) Հիմնադրամի Մամլոյ Ասուլիսը



Երկուշաբթի 27 Դեկտեմբերին, կէսօրէ առաջ ժամը 11-ին Կլեմէնտէյլի Պրէնթօլիու Գոլլէքշըն սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Գիտութեան Եւ Արհեստագիտութեան (Թէքնոլոժի) հիմնադրամի մամլոյ, ասուլիսը, որուն ներկայ էին շրջանի հայկական թերթերու եւ հեռուսկայաններու ներկայացուցիչները:

Սոյն ասուլիսին ընդարձակ զեկուցումով մը հանդէս եկաւ վերոյիշեալ հիմնադրամի գործադիր տնօրէն՝ Արմէն Ուրուճեանը: Արդարեւ չորս տարի առաջ ծնունդ առած այս մեծ կառուցի համա-նախագահն է Գոլլիտ-19ի պատուաստի նախաձեռնարկ հիմնարկի տնօրէն Նուպար Աֆէեանը:

Գիտութեան եւ արհեստագիտական հիմնադրամը ոչ քաղաքական հաստատութիւն մըն է, որ կը նպատակադրէ նոր ուսումնարաններ հաստատել եւ գիտական բարձրագոյն մասնագիտութիւններով օժտուած նոր սերունդ մը պատրաստել երկրի տարբեր մարզերուն մէջ: Ծրագրուած է յառաջադէմ երկիրներու հետ, համահաւասար քայլեր առնելով մրցունակ դառնալ: Ծրագրի իրականացման առաջին հանգրուանի համար աւելի քան մէկ միլիոն տոլարի վարկ մը հաստատուած է:

Առաջարկուեցաւ լրատուամիջոցներու միջոցով հայ եւ օտար հասարակութեան ծանօթացնել այս շահեկան նախաձեռնութեան մասին:

Արցախի Սեջ Պիտի Զընդունինք

Շարունակուած էջ 1-էն
յաթափման», - շեշտած է Յարութիւնեան:
«Բոլոր իշխանութիւնները ժամանակաւոր են», - գրած է

Արցախի Յարութիւնեան՝ շեշտելով, որ ատրպէյճանական-դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցով իւրաքանչիւր հայու ու իշխանութեան ուղենիշը պէտք է ըլլայ արցախահայութեան

Կուսակցական Գործունէութեան Պատճառաւ Կարգալոյծ Հռչակուած Է Տէր Ղազար Քահանայ Պետրոսեանը

Դեկտեմբեր 27-ին, Մայր Աթոռը յայտարարութիւն տարածած էր, որ Գարեգին Երկրորդ Մայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինութեամբ կարգալոյծ հռչակուած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ Մասեացոսնի թեմի հոգեւոր սպասաւոր Տ. Ղազար քահանայ Պետրոսեան: Ըստ Մայր Աթոռին՝ անոր համար հիմք ծառայած է «Ղազար քահանայի կողմից հոգեւոր վերադաս իշխանութեան նկատմամբ դրսեւորած անհնազանդութիւնը, եկեղեցականի կոչմանն ու առաքելութեանը անհարիր կուսակցական գործունէութեամբ ու քարոզչութեամբ զբաղուելը եւ Մայր Աթոռի Կարգապահական յանձնարմբի հետ հանդիպելու հրաւերները մերժելը»:

Յիշեցնենք, որ արդէն նախկին քահանան 2019-2020 թուականներուն իր քաղաքական ոչ ստոյգ յայտարարութիւններու եւ ելոյթներու համար երկու անգամ փիլոնագրկուած էր:

Իսկ երրորդ անգամ փիլոնագրկուած էր՝ աջակցելով կուսակցութեան, որ կը կոչուի «Քրիստոնեայ Հայաստան», եւ որ Ապարանի, Արտաշատի, Վեդիի եւ քանի մը այլ համայնքներու մէջ մասնակցած էր ՏԻՄ ընտրութիւններուն՝ սատարելով նախկին իշխանութեան հետ կապուած թեկնածուներու: Օրինակ՝ Ապարանի մէջ, այս կուսակցութիւնը դաշինքով առաջադրած էր գործող համայնքապետ՝ Կարէն Եղիազարեանին, իսկ Արտաշատի մէջ սեփական



Կարգալոյծ Հռչակուած Տ. Ղազար քահանայ Պետրոսեան

թեկնածու առաջադրած էր :
Անդրադառնալով իր կարգալոյծ հռչակուելու մասին Մայր Աթոռի յայտարարութեան՝ տէր Ղազար Բիւրաւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ էջով պատասխան յայտարարութիւն տարածած է՝ «գահրկեց հռչակելով» Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ը:
«Կուսակրօնութեան ուխտը խախտելու, Հաւատացեալ Հայ Քրիստոնեաներին հալածելու եւ Քրիստոնեայ Հայաստանին թշնամաբար վնասելու համար գահրկեց է հռչակուել Գարեգին Բ Ներսիսեան Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ յետագայում կը դատուի աշխարհականների շարքը՝ Կտրիճ Ներսիսեան անունով», - նշուած է յայտարարութեամբ:

կամ քն ու նպատակները:
«Անկախ որեւէ մէկի կամ քից ու կարծիքից, վստահ եմ, արցախահայութիւնը շարունակելու է իր արդար պայքարը յանուն Արցախի անկախութեան միջազգային ճանաչման եւ Հայրենիքի պաշտպանութեան», - հաւաստիացուցած է ան:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան արձագանգած է իր այդ եւ հակամարտութեան թեմայով կատարուած այլ յայտարարութիւններուն, նախ յիշեցուցած, որ խօսած է իր վարչապետ դառնալէն առաջ ձեւաւորուած բանակցային բովանդակութեան մասին, եւ մեկնաբանութիւնը տարակուսելի է իրեն համար:

«Ինչ վերաբերուած է մինչեւ կարգավիճակի հարցով հաւանական հանրաքուէն ԼՂ-ի ունեցած կարգավիճակին, այս մասին հարցազրոյցում ասել եմ, որ 2016 թուականին միջնորդները ներկայացրել են բանակցային երեք փաթեթ (մէկը Ապրիլեան պատերազմից առաջ, երկուսը յետոյ), որտեղ ի տարբերութիւն 2011 թուականի կազանեան փաստաթղթի, «Լեռնային Ղարաբաղը ստանում է միջանկեալ կարգավիճակ» նախադասութիւնը բացակայած է:

Այդ երեք փաթեթներից երրորդում, որը ներկայացուել է 2016 թուականի Օգոստոսին, յայտնուել է մի դրոյթ, որտեղ ասուած է, որ Լեռնային Ղարաբաղի կեանքի կազմակերպման իրաւական եւ գործնական մեքենականութիւններին մասին որոշումը կայացնելու է ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդը, խորհրդակցելով ԵԱՀԿ ՄԽ համաձայնագրահանրի, Ատրպէյճանի, Հայաստանի, ԵԱՀԿ գործող նախագահողի հետ: Հենց սա եմ

համարել աղէտ բանակցային գործընթացում, որովհետեւ ակնյայտ է, որ ՄԱԿ-ի ԱԽ-ն բոլոր որոշումները կայացնելու էր նախկինում ԼՂ հարցով իր իսկ ընդունած բանաձեւերի տրամաբանութեամբ, որտեղ ԼՂ-ն ճանաչել էր Ատրպէյճանի մաս», - նշած է վարչապետը:

Շարունակելով գրառումը՝ ան շեշտած է, թէ այս եւ քանի մը այլ կարեւոր բանակցային խնդիրներ հաշուի առնելով ԱԺ ամպիոնէն պնդած է, որ 2018 թուականին՝ իր վարչապետ դառնալէն առաջ առկայ բանակցային բովանդակութեամբ եւ իրողութիւններով Արցախը կորսնցուցած էր Ատրպէյճանի կազմին ներս չըլլալու թէ տեսական եւ թէ գործնական հնարաւորութիւնները:

«Վարչապետ դառնալով ես սրան ոչ թէ համակերպուել եմ, այլ սրա դէմ պայքարել եմ: Նաեւ այս պատճառով է սկսուել պատերազմը: Այսօր մարդիկ են ասում, որ ես չպէտք է բանակցեմ ԼՂ անունից, ովքեր ինձ 2018-ից քննադատում էին նրա համար, որ ես ասում էի, որ Լեռնային Ղարաբաղի անունից բանակցելու մաստաթ չունեմ: Հասկանում եմ, որ շատ յարգարժան մարդիկ հիմա են բողոքում 2016 թուականի պատերազմի պատճառ ու հետեւանք հանդիսացող բանակցային բովանդակութեան դէմ: Այն ժամանակ կամ տեղեակ չեն եղել կամ բողոքելու իրաւունք չեն ունեցել: Այդ բովանդակութեան դէմ ես էլ եմ բողոքում ու այդ բովանդակութիւնը չէզոքացնելու համար արել եմ ինչ հնարաւոր էր: Բայց ճշմարտութիւնը թաքցնել, կը ներքէ, չեմ կարող», - եզրափակած է Նիկոլ Փաշինեան:

Յոյսը Սարդարապատի Ձանգակներն են



ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

44օրեայ պատերազմի մասնակից կամաւոր մը, որ անցեալին նոյնպէս կամաւոր մասնակցած էր Արցախեան առաջին պատերազմին, կը մեկնաբանէր երկու կռիւներու տարբերութիւնը: «Այն ժամանակ համարեա իրարու հաւասար գէնքով պատերազմեցանք: Մեր եւ իրենց ձեռքին նոյն Քալաշնիքովն էր: Մենք ունէինք հայրենիքը օտարի լուծեն պաշտպանելու կամքը, ինչ որ իրենք չունէին: Իսկ այս անգամ, լման 30 տարի հայրենի երկիրը ազատագրելու քարոզչութեան ազդեցութեան տակ յաղթանակի կամքով եկողը թշնամին էր: Աւելին՝ ունէր գէնքի գերակշռութիւն: Անգոր մնացինք, նոյնիսկ սարսափի մատուցանք ԱԹՄ-նե-

րու դիմաց: Եւ մանաւանդ՝ հակառակորդը ռազմափորձերով պատրաստուած էր յարձակման ու մենք յանկարծակիի եկած»: Անհատական այս վկայութիւնը լաւագոյն կը բացատրէ պատահածը եւ հետեւանքները: Խօսակիցս չուզեր քաղաքական մեկնաբանութիւններ տալ: Համոզուած է թէ մարտնչող բանակի ամենավատ սպառնալիքն է քաղաքականութիւնը: «Զինուորը պիտի հնազանդի հրամանատարի հրամաններուն եւ արհեստավարժ կերպով պիտի կատարէ իր պարտականութիւնը, նոյնիսկ կեանքը գոհելու գնով»: Բայց նաեւ գիտենք թէ թաւշեայ յեղափոխութիւնով գահընկեց եղածներու ենթակայ սպաներ այս պատերազմը վրիժառուութեան առիթ համարեցին եւ գինուորին հրամա-

յեցին դիրքերը լքել ու մաշկը ազատել: Պարտութենէ ետք ստեղծուած քաղաքական ճգնաժամը արգելք եղաւ նման դաւաճանութեան հեղինակներուն արժանի կերպով հարցաքննման: Այս պայմաններու տակ շատ հասկնալի է Իլհամ Ալիեւի ամբարտաւան ելոյթները: Ան հիմա ունի շփանալու բազմաթիւ պատճառներ: Անոնց կարեւորագոյնն է համաշխարհային դիւանագիտութեան ցուցաբերած անտարբերութիւնը: Նախատուարներու շնորհիւ Ալիեւ հազած է անպատժելիութեան պատմուճանը, որ թուրքիոյ նախագահին հազածին հետ նոյն դերձակին ձեռքին ելած է: Հարիւրամեայ դաժան փորձերով տեսած ենք թէ հայը, աշխարհի բոլոր ժողովուրդներուն նման չէ ունեցած, չունի, եւ պիտի չունենայ բարեկամ պետութիւններ: Պետութիւնները իրարու մերձեցնողը միայն ու միայն անոնց շահերուն համընկնումն է: Երբ երկու պետութիւններու միջեւ կան փոխադարձ շահարկման եղանակներ, անոնք կը ներկայանան իբրեւ բարեկամ, կամ աւելի դիւանագիտական եզրով՝ դաշնակից: Ազերպայճան ունենալով շահութաբեր լծակներ, դիւրաւ դաշնակից կ'ըլլայ Իսրայէլի, Թուրքիոյ կամ Ռուսիոյ Դաշնութեան հետ: Բացի Ռուսիոյ Դաշնութենէն, Պաքուին մեծ քանակութեամբ գէնք ու

գինամթերք տրամադրող այս երկիրները իրենց արտադրութիւնը կ'ապահովեն ԱՄՆ եւ Եւրոպական երկիրներէ ստացած գիտելիքով ու թեխնիկական սարքերով: Մեզի համար աւելի կարեւոր է այս ժխտական պայմաններու դիմաց հայուն պատասխանը: Նախ նշենք որ այս հարցադրումի պատասխանը հաւանականութիւններէն մէկը ճշդելով չենք կրնար գտնել: Այո, կարելի է ընտրել տարբերակ մը, ըստ որու անհատը պիտի ըսեր «Կարճաեւ կեանք մըն ինձի պարգեւուածը եւ չեմ ուզեր այդ պարգեւը ապագայ չունեցող երկրի մը համար սպառել»: Նոյնիսկ անհատը յանուն իր զաւակներուն բարօրութեան կրնայ լքել երկիրը: Այդ ալ հասկնալի է: Բայց երբ կան մարդիկ, որոնք ի գին բոլոր խոչընդոտներու չեն լքեր հայրենի երկիրը ու կը ջանան համակերպիլ բոլոր տեսակի գրկանքներուն, որպէսզի յարմար բոլոր առիթներով յաղթահարեն գանոնք, պարտինք հաստատել թէ առաջին խմբակին պատկանողները լքած են ոչ միայն հայրենի երկիրը, այլ հայ կոչումին սահմանած բոլոր արժանիքները: Ալիեւի անպատկառ սպառնալիքներուն իբր պատասխան մեր ժողովուրդը կրկին անգամ կը հնչեցնէ Սարդարապատի գանգակները, որոնք շատ աւելի դժուար օրերուն սանձեցին ազգը ոչնչացնել ուխտած թշնամին:

Մամլոյ Ասուլիսի Սը Զետքերով

Շարունակուած էջ 1-էն

տալու եւ նուէր ստանալու սովորու-
թեամբ: Նուէր տալն ու ստանալը
գոհունակութիւն կը պատճառեն
երբ անոնք կուզան սիրալիր եւ
բարեացակամ անձերէ, ոչ թէ շահա-
գրիտական նկատումներէ կամ
պարտք մը վճարելու զգացումներէ
մղուած մարդոցմէ:

Յաճախ կը հարցուի, թէ ի՞նչ
տեսակ նուէրներ աւելի գոհունա-
կութիւն եւ ուրախութիւն կը պատ-
ճառեն զիտակից եւ բանիմաց մար-
դոց: Ընդհանրապէս այն տեսակ
նուէրները որոնք անձնական են-
իրեր, որոնք մասնաւոր կերպով
շինուած, սարգուած կամ ծախու
առնուած են այն անձերուն, որոնց
նուէրը կը տրուի: Կամ այն տեսակի
նուէրներ, որոնք կարիք մը կամ
պէտք մը կը գոհացնեն նուէրը
ստացողին համար: Կամ այնպիսի
նուէրներ, որոնք օգտակար են,
աւելի կը նպաստեն եւ կը դիւրաց-
նեն նպաստընկալին կեանքը:

Քսան դարեր առաջ, Յիսուս
Քրիստոսի Ծննդեան Օրը Աստու-
ած մարդկութեան տուաւ իր
մեծագոյն նուէրը, իր Միածին
Որդին: Ինչպէ՞ս կարելի է փոխա-
դարձել Աստուծոյ այս անմասն
Պարգևին: Առ ի երախտագիտու-
թիւն, Ծնունդի առթիւ ի՞նչ կրնանք
տալ Աստուծոյ: Այս հարցումին
պատասխանը Յիսուս կուտայ Յով-
հաննու Աւետարանի 17 գլխուն
24րդ համարին մէջ ըսելով, «Հայր,
անոնք որոնք ինձի տուիր՝ կ'ուզեմ
որ ինձի հետ ըլլան՝ ուր որ ըլլամ,
որպէս զի տեսնեն իմ փառքս, այն
փառքը, որ ինձի տուիր, որովհե-
տեւ զիս սիրեցիր աշխարհի ստեղ-
ծագործութենէն առաջ»:

Այլ խօսքով, Յիսուսի Ծննդեան
տարեդարձին առթիւ, մեր նուիրե-
լիք լաւագոյն պարգևը իրեն հետ
ըլլալն է, մեր կեանքերը իրեն
ընծայելն է: Ծնունդի առթիւ երբ
մեր սիրելիները մեզի հարցնեն, թէ
ի՞նչ նուէր կ'ուզենք, մեզմէ շատե-
րուն պատասխանը յաճախ հետեւե-
ռալը կ'ըլլայ, «Քեզի հետ ըլլալը
լաւագոյն նուէրն է»: Քրիստոսի
բաղձանքն ալ այն է, որ մենք իրեն
հետ եւ իրենը ըլլանք:

Արդարեւ, Յիսուս Քրիստոսի
աշխարհ գալուն նպատակն ու առա-
քելութիւնը այն էր, որ իրմէ եւ
Աստուծմէ հեռու չմնանք մեր մեղ-
քերուն պատճառով: Ան իր երկնա-
յին փառքը ձգելով աշխարհ եկաւ,



մեզի համար հալածուեցաւ, չար-
չարուեցաւ եւ խաչուեցաւ, որպէս
զի մեզ Աստուծոյ հետ հաշտեցնէ:
Եզակի եւ չնաշխարհիկ պարգև
մըն է ասիկա, որ մարդկային
չափանիշներով կարելի չէ գնահա-
տել:

Արդ, այս Ծնունդին, լաւա-
գոյն նուէրը, որ կրնանք ընծայել
Աստուծոյ եւ մեր Տիրոջ Յիսուս
Քրիստոսի մեր կեանքն է՝ մեր
Ժամանակէն, մեր ձիրքերէն, տա-
ղանդներէն, ունեցածէն մեր լաւա-
գոյնը ընծայել իրեն: Իր անունով
եւ իր փառքին համար օգնութեան
ձեռք կարկառել մեր նմաններուն,
մեր հայրենաբնակ ազգակիցնե-
րուն, որոնք կարիք ունին մեր
սիրոյն եւ կարեկցութեան: Ան մե-
զի պիտի ըսէ, «Որովհետեւ այս իմ
եղբայրներուն ամենէն պզտիկնե-
րէն մէկուն ըրիք, ինձի ըրիք»
(Մատթ. 25.40): Իսկ երբ մեր
կեանքերը կը նուիրենք Անոր այն
ստեն ինքնաբերաբար կը ծառա-
յենք մեր նմաններուն, կը կարեկ-
ցինք զրկուածներուն կը ինամենք
որբերը, կը կերակրենք անօթիւնե-
րը եւ կ'օգնենք մարդոց որպէս զի
անոնք յոյս եւ նոր կեանք գտնեն
Քրիստոսով:

Ս. Ծննդեան այս եղանակին,
անգամ մը եւս տաղնապի մէջ է մեր
Ժողովուրդը Հայաստանի, Արցա-
խի եւ Միջին Արեւելքի մէջ:
Յատկապէս, Լիբանանահայ մեր գա-
ղութը մատնուած է տնտեսական
խիստ մտահոգիչ կացութեան մը:
Եթէ իրօք մենք մեր եղբայրներուն
եւ քոյրերուն «պահպան» ենք,
անհրաժեշտ է որ մեր օգնութեան
ձեռքը երկարենք իրենց:

Ս. Ծնունդի առթիւ Աստու-
ած իր ամենամեծ Պարգևը տուաւ
մեզի, արդեօք մենք ի՞նչ կու տանք
իրեն եւ մեր եղբայրներուն ու
քոյրերուն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.
Օրհնեալ է յայտնութիւնը
Քրիստոսի:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թու-
թիկեան, Գործադիր Տնօրէն
Հայ Աւետարանական Համաշ-
խարհային Խորհուրդի

«Նարեկ»ը եւ Գրիգոր Նարեկացիի «Մատեան Ողբերգութեան» Երկը (Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն)

Գ. ՍՈՒՆՅԵԱՆ

Հայ գրականութեան ամենա-
տարածուած ստեղծագործութեան
հեղինակն է հանճարեղ վանական
Գրիգոր Նարեկացին (951-1003):
Ան որպէս եզակի հոգեւորական,
բանաստեղծ, փիլիսոփայ եւ երա-
ժիշտ մեր մատենագրութեան պար-
ծանքն է: Իր տաանեակ մը արժէ-
քաւոր գործերու գլուխ գործոցն է
«Մատեան Ողբերգութեան» երկը
կամ պոէմը: Միջնադարուն գրուած
այս ստեղծագործութիւնը՝ մեծ
տարածում գտնելով ընդհանրա-



ցած է մեր եկեղեցիներէն եւ վանա-
կան շրջանակներէն ներս: Նախա-
պէս գրչագիրներու կողմէ ընդօրի-
նակուելէ ետք առաւել հասանելի
դարձած է տպագրութեան միջո-
ցով: Դարեր առաջ հայերը գայն կը
նկատէին նաեւ բուժիչ յատկու-
թիւն ունեցող գիրք եւ համար-
ուած էր ոպէս «կեանքի դեղ»:
Ուստի «Մատեան Ողբերգութեան»ը
կոչուած է նաեւ Նարեկ, Նարեկայ
վանքին անունով:




Առաջին անգամ «Մատեան
Ողբերգութեան»ը տպագրուած է
Մարսէյի մէջ, 1673ին Ռական Երե-
ւանցիի կողմէ: Յետագային տպագր-
ուած է շուրջ 70 անգամ: Հանճա-
րեղ վարդապետի այս երկը թարգ-
մանուած է նաեւ անգլերէնի, ֆրանս-
սերէնի, պարսկերէնի իտալերէնի,
մինչեւ իսկ թրքերէնի:
Մինչեւ մօտաւորապէս կէս դար

առաջ, սուրբերու կարգին դաս-
ուած Գրիգոր Նարեկացիի «Մատե-
ան Ողբերգութեան» երկը ծանօթ
էր գրաբար լեզուով: Իսկ աշխար-
հաբար հանրամատչելի լեզուով
սկսաւ հրատարակուիլ արեւմտա-
հայերէնի թարգմանուած թորգոմ
Արք. Գուշակեանի կողմէ 1938-ին:
Նոյնպիսի գործ մըն էր նաեւ
Գարեգին Արք. Տրապիզոնիի «Նա-
րեկ»ը, որ քննադատուեցաւ թարգ-
մանութեան մէջ բանաստեղծական
երանգ տրուած ըլլալուն համար:

Հայաստանի մէջ քրիստոնէ-
ութեան ընդունման 1700-ամեա-
կին առթիւ, 1994-ին Երեւանի
Նարեկ հրատարակչակոտան կողմէ
լոյս ընծայուեցաւ «Մատեան Ող-
բերգութեան» պոէմը, 472 էջերէ
բաղկացած փոքրածաւալ հատորը,
արեւելահայերէնով, թարգմանու-
թեամբ Վ. Գէորգեանի:

Վերջերս Հայաստանէն ստա-
ցանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիած-
նի 2021 թուի հրատարակութիւնն
եղող Ս. Գրիգոր Նարեկացիի
(դարձեալ արեւելահայերէնով)
«Մատեան Ողբերգութեան» (Նա-
րեկ) հատորը, որուն գրաբարէն



թարգմանութիւնը կատարած է
Մկրտիչ Խերանեան: Աւելի քան
600 էջերէ բաղկացած այս աշխա-
տասիրութիւնն ունի նաեւ ծանօ-
թագրութիւններու յաւելեալ բա-
ժին մը, ինչպէս նաեւ բացատրա-
կան օգտաշատ բառարան մը:

2021ին Լոս Անճելոսի մէջ լոյս
տեսաւ 145 էջերէ բաղկացած Սուրբ
Գրիգոր Նարեկացիի «Մատեան
Ողբերգութեան» (ընտրանի հա-
տորը): Այս ստեղծագործութիւնը
չատ հանրամատչելի լեզուով ու
բժախնդրութեամբ աշխարհաբա-
րի (արեւմտահայերէն) թարգման-
ուած է Տաճատ Մ. Վրդ. Եարտըմ-
եանը: Հեղինակը թարգմանութեան
նախաձեռնած է շուրջ քսան տարի
առաջ: Այս առթիւ գիրքի յառա-
ջաբանին մէջ, Թեմիս Առաջնորդ
Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան
անդրադառնալէ ետք Հայ մեծ սուր-
բին եւ անոր աստեղծագործու-
թիւններուն, կը յարէ «...Նարեկը
յաւերժ է մեր Ժողովուրդին պէս:
Այս թարգմանութիւնը կը յուսանք
նոր ու օգտակար օղակ մը կրնայ
ըլլալ Ժամանակներու այդ շղթա-
յին մէջ»:

Առաջնորդ Սրբազան Հօր Պատգամը

Շարունակուած էջ 11-էն
եայ, վերածնունդի Քրիստոսի Սգ
Ծնունդով, որպէսզի «նոր մար-
դուն» աշխարհ գալով այս հողա-
կոյտին վրայ աւելնայ պտղունց մը
բարութիւն, կաթիլ մը սէր, նշոյլ
մը խիղճ, ծուկն մը յոյս, ափ մը
հաւատք: Ա՛յս է սպասումը մեր

նախնեաց, այս է սպասումը մեր
քաջարի երիտասարդներուն, որոնք
կեանքն ապրեցան վասն Յիսուսի,
վասն Հայրենեաց:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ:
Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիս-
տոսի:
Յովնան Արք. Տէրտէրեան

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

ՍԻՆ



ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒԻՆԵԱՆ

Ինչպես անցաւ այս տարին-իմաստալից, թէ ոչ՝...: Յետադարձ ակնարկ մը նետենք ու մտածենք միասին...: Յարգելի ընթերցող թէ 2021-ը նկարագրելու համար մեծ-մեծ ածականներ սկսեցին տողանցել ձեր մտքին մէջ, ինչպէս՝ դատարկ, անպարունակ, բովանդակագուրդ, իմաստագուրդ, անիրական, ապարդիւն, կամ՝ անարդիւնաւէտ, դուք բոլորը հաճեցէք դնել մէկ դի, որովհետեւ աւարտող տարին կարելի էր ամփոփել միավանկի մը մէջ՝ սին: Այսօր, երբ քաղաքագէտները կու տան սին խոստումներ, ընկերային ցանցերու մէջ կը հոսին սին լուրեր ու սին են խաղաղութեան բանակցութիւնները՝ որոշեցի որ մեր բառարաններն եւ բանաստեղծները խօսին այդ տիրահաշակ բառի՝ այսինքն «սին» եռատառի մասին:

Բնիկ բառ է «սին»: Ունի յունական գարմիկ մը՝ «քենոս», այսինքն՝ դատարկ, չնչին: Երկու բառերը հայ-յունական գուգաբանութեան օրինակ մըն են: Ինչպէս ամէն բառ, նոյնպէս ալ «սին»ը որոշեց մեծնալ, դառնալ աւելի մեծ դատարկութիւն մը: Հայոց լեզուի պատկառելի պարագլուխներն են թիւը 50-ի հասնող այն բաղադրեալ բառերը, որոնց արմատը «սին» է: Ահա քանի մը օրինակ: Հայր երբեմն «անապաշտ» եւ «անահաւատ» է, ան հետամուտ կ'ըլլայ «անտի» արժէքներու, ունեցեր է «սինլեալ» եւ «սինլքոր» դէմքեր, բեմերու վրայ միշտ կը յայտնուի «անապարծ» եւ «անափառ» մը, որ կը անանի ծափահարութիւններով, եւ վերջապէս՝ ժողովներու մէջ հայր դիւրութեամբ կը դառնայ «անաբան»: Վերջինը այնքան տարածուած է եղած, որ մեր մայրենին, ամօթահար անկասկած, հարկադրուեր է ստեղծել «անտի-աժողով» բառը: Չեմ ուզեր սնտո-իախօսութիւն ընել ու այժմ ձեզի կը ներկայացնեմ «սին» բառընտանիքի ամենայայտնի երկու անդամը: Մէկը անկուտի է, միւսը՝ անմիջակ, այսինքն մէկը «անանկանալ» բայն է, իսկ միւսը՝ «անամէջ» ածականը: Հայր անոնց տուաւ փոխաբերական իմաստներ ալ, որպէսզի կարենայ իր պատմութիւնը ըմբռնել: Իր հազարամեայ անցեալի մէջ հայր բազմաթիւ անգամներ ունեցաւ «անանկացած» կամ «անամէջ» ջանքեր, գաղափարներ, քաղաքականութիւններ, յաղթանակներ եւ երազներ: Օր մը Եղիշէ Չարենցը գրեց. «Մեր աշխատանքը դիւցազնական, նրան թուում էր սին մի երազ»:

Ոսկեդարուն հայր սկսաւ իր

մարենի լեզուով ընթերցանել Սուրբ Գրքը: Անոր հջերու մէջ հանդիպեցաւ սնտոիութիւններու բազմաթիւ տեսակներու, ինչպէս՝ «սնտոի» մարդ, մեծութիւն, խօսք, գորութիւն, յոյս եւ պաշտամունք: 10-րդ դարուն Գրիգոր Նարեկացին «Մատեան Ողբերգութեան» ստեղծագործութեան մէջ գրի առաւ «սին» բառի ընտիր արտայայտութիւններ. «Մնապարծ յուսահատ», «Սին սաղարթիւն պաճուճելոյ», «Չսին պարծանօք պաճուճելոյ»: 1384 թուականին իր խուցի մէջ ստուար մատեան մը ընթերցանող Յովհաննէս գրիչը գիրքի յիշատակարանի մէջ անմիտ եւ անհանձարներուն որակեց՝ սին. «Անմիտ եւ անհանձար մտաց՝ սինս եւ չնչինս»:

Միջնադարու հայր գիտէր թէ սին է կեանքը, ունայն է ամէն բան: Այդ պատճառով է, որ հայու տաճարը մերկ է ներքին եւ արտաքին պաճուճանքէ: Տաղապահ Սուրբասն ալ ցաւելով տեսաւ, թէ իր աշխատանքը ի գուր էր. «Չի հանապազ գործքն իմ ահ ու զար եղեւ, / Ահ ու զար եղեւ, կեանս իմ եղեւ սին»: «Սին» բառը յարմար եկաւ նաեւ Սիմէոն Կաֆացիի հեղինակած իմաստասիրական քերթուածի մը. «Մնտոի է աշխարհս՝ փառօք ամենայն»:

Հայ առաջին կին լրագրող էլյալիս Կեսարացեանը նկատեց, թէ սեռային անհաւասարակչութեան պատճառը տգիտութիւնն է, որուն հետեւանքով կինը դարձեր է «ոչ իբրեւ իմացական էակ կատարեալ մարդկութիւն կրող՝ այլ իբրեւ արական սեռին սին ստուերը»: Չապէլ Եսայեանն ալ նկատեց այդ հարցը, ապա պաշտպանեց իրական սեռը. «Դուն կաս, որովհետեւ ես կամ, ու առանց ինձ դու սին ստուեր մըն ես»: Նոյն օրերուն Արշակունի թէրդիկը այցելեց մոխրացած Կիլիկիան: Իր տպաւորութիւններու մէջ այդ հայուհին երկար ժամանակ անգործածելի մնացած ածական մը երեւան հանեց՝ «սինլքոր», ու հայութեան կեանքի իրաւունքը խլող ջարդարարները արժանի ըրաւ անոր. «Սինլքոր մը, ապիրատ մը, ցածոգի արարած մը՝ Հայութիւնը փճացունելու լրբենի համարձակութեամբը տոգորուն»: Բանաստեղծ Նիկողոս Սարաֆեանի կարծիքով սին էին մարդկային օրէնքները. «Ինչո՞ւ չըլլայինք սա բնութեան պէս, ինչո՞ւ չըլլայինք անասնական, զերծ մեր մարդկային սին օրէնքներէն ու անոնց ծնունդ տուած խտերէն եւ ցաւերէն»: Սարաֆեանը հեղինակն է նաեւ երկու հետաքրքրական խօսքի. «Մնամէջ սիրոյ արտայայտութիւններ» եւ «Մնափառութեան մը անդունդը»: «Սին» ածականին քնա-

Սփիւռքահայ Մասնագետները Հայաստանեան Աշխատաշուկային Սեջ Սեծ Պահանջարկ Ունին

«Կամաց-կամաց կը սորվիմ հայերէն», - ըսաւ Շանթը:

Շանթը Հայաստան ժամանած է Աւստրալիայէն՝ հայրենիքին մէջ աշխատելու նպատակաւ: Ան կը խոստովանի, որ հայերէնով հաղորդակցիլը տակաւին դժուար է իրեն համար, յաճախ օգնութեան կը հասնի անգլերէնը, սակայն երիտասարդ մասնագէտին այդ խոչընդոտը չի կանգնեցներ:

«Շահադիտութեան վերլուծաբան եմ: Այսինքն՝ ինչ գործարկում մեկնարկող ընկերութիւն կայ, կը վերլուծենք, եւ եթէ դրամահաւաքի կամ ներդրման կարիք ունին, իրենց հետ կ'աշխատինք, որպէսզի օգնենք իրենց», - պատմեց ան:

Շանթին հետ նոյն ընկերութեան է ներս՝ «Orion Worldwide Innovations Armenia»-էն ներս կ'աշխատի հայրենադարձ մասնագէտ մը եւս: Արաքսը Նոր Եօրքէն է, եղած է Օրիոնի այնտեղի մասնաճիւղի աշխատակիցը, օգոստոսին եկած է հայրենիք ու արդէն հասցուցած է ընտելանալու հայաստանեան ապրելակերպին:

«Ես եւ իմ գործընկերս՝ Շանթը, կ'աշխատինք «MND»-ի վրայ եւ կրնանք ըսել, որ Հայաստանի մէջ մենք այս ծրագրով իւրայատուկ ենք: Ինչպէս գիտէք, Հայաստանի մէջ 1500-էն աւելի գործարկումներ կան: Մենք կը վերլուծենք զանոնք, կը հասկնանք, թէ ինչպէս կրնան աճիլ եւ հասունանալ», - յաւելեց Արաքսը:

Սերինան եկած է Պոստոնէն, մասնագիտութեամբ միջազգայնագէտ է: Ռուսագէտը Հայաստան բերած է հայրենիքին մէջ իր կարողութիւններն ու փորձառութիւնը կիրառելու ցանկութիւնը:

«Նպատակս էր՝ Հայաստան գամ եւ տարբեր ոլորտներէ ներս աշխատիմ, քանի որ գիտեմ, թէ այստեղ հնարաւորութիւնները որ-

քան մեծ են եւ կ'ուզեմ ամէն ինչէն քիչ-քիչ փորձել, որպէսզի հասկնամ, թէ ո՛ւր աւելի շատ իմ կարիքս կայ», - ըսաւ Սերինան:

Օրիոնը իր գործունէութիւնը սկսած է Նոր Եօրքի մէջ՝ 2017 թուականին: Գործարարական խորհրդատուութեան ասպարէզէն ներս երկար տարիներու փորձ ունեցող էմմա Առաքելեանը կը նշէ, որ ինք ուսումնասիրած է Հայաստանի ներուժը եւ մեծ կարելիութիւն կը տեսնէ հայկական գործարկումներու գործունէութիւնը արտաքին աշխարհի հետ կապելու առումով:

«Նպատակն է կարենալ գանոնք ներդրման պատրաստ դարձնել, որպէսզի կարենանք շահադիտական ընկերութիւնները ամբողջ աշխարհէն ներգրաւել եւ ներդրումներ ստանալ», - ըսաւ էմմա Առաքելեանը:

Օրիոնի համահիմնադիր եւ հայաստանեան մասնաճիւղի տնօրէն Տիանա Արզումանեանը գոհ է սփիւռքէն ժամանած իր աշխատակիցներէն: Ան կը նշէ, որ 2020 թուականին աշխատանքները ընթացք առնելէն ետք, կարճ ժամանակուան մէջ յաջողած է մեծ արդիւնքներ արձանագրելու:

«Մեր գործունէութեան հիմնական նպատակը հայկական կենսոլորտի զարգացման նպատակն է եւ հայկական գործարկումները միջազգային շուկայ բերելուն օգնելը», - ըսաւ Տիանա Արզումանեանը:

Ընկերութեան անձնակազմը դեռեւս բաղկացած է 8 հոգիէ, որոնցմէ 4-ը հայրենադարձներ են, երկուքն ալ կը բնակին Նոր Եօրքի մէջ եւ կ'աշխատին հեռավար: Հիմնադիրները վստահ են, որ յաջորդ տարի կ'ընդլայնի, թէ՛ հայրենադարձած, թէ՛ հայրենիքի մէջ բնակող աշխատակիցներուն թիւը:

րական տրտում տարագ մըն ալ տուաւ Վահան Տէրեանը. «Սին խօսքերի մէջ, գուարթ ամբոխում / Շրջում եմ, բայց միշտ հեռու եմ, չկամ»: Մեր սրտաբեկ քերթող Մատթէոս Զարիֆեանի ժպիտն իսկ սին էր. «Փիլիսոփայ ժպիտս : Սին է, սին է, երազ իսկ չէ, ոչինչ է»: Ապա հայրենի մամուլը նկատեց, թէ երկրի բոլոր երազներն էին սին: Ահա, կը խօսին մեր թերթերը. «Խաղաղութեան մասին բանակցութիւնները սին են», «Սին խոստումներ անօթեւան ընտանիքներին», «Չպէտք է ժողովրդին սնէին սին յոյսերով»:

Ու վերջապէս «սին» խօսքեր հիւսեցին մեր երգահանները: Վախթանգ Յարութիւնեանը նուազեց ու մեներգեց. «Սիրտս, դատարկուած / Սին պոռթկումներից, / Բո մէջ է փակուած այս խենթ աշխարհից»: Իսկ Շառլ Ազնաւուրը երգեց սիրոյ ունայնութիւնը.

Պիտի կարեմալ ժպտալ վերստին
Երբ քեզ լքում է թանկագինը քո
Ու մնում է լոկ ունայնութիւն սին:
Մինչեւ յաջորդ հանդիպում
յարգելի ընթերցողներ ձեզի կը մաղթեմ իմաստալից եւ արդիւնաւէտ նոր տարի:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

Իրաքահայ Ընտանեկան Միութեան Շաբաթօրեայ Վարժարան Նոր Տարուայ Եւ Ս. Ծննդեան 43-Րդ Հանդէսը



ԽԱԶԻԿ ԵՎ ՆՈՅՆՆԵՐ

Վերջին երկու տարիներուն պատկաճեւ ժամերի պատճառաւ, վարժարանի դասերը հեռակազ կապով zoom-ով կ'ըլլային եւ երկու տարի Նոր Տարուայ եւ Ս. Ծննդեան տօները, դպրոցէն ներս եւ ծնողներու ներկայութեամբ չեն եղած: Այլ zoom-ով ձեռնարկները կ'ըլլային:

Այս տարի սահմանափակումները մասամբ մեղմացած ըլլալով, մեր դպրոցի դասերը, դպրոցէն ներս աշակերտներուն ներկայութեամբ կ'ընթանան:

Շաբաթ, Դեկտեմբեր 18, 2021-ին առաւօտեան ժամը 10:00-ին միացն աշակերտներու (առանց ծնողներու) ներկայութեամբ, տեղի ունեցաւ վարժարանի Նոր Տարուայ եւ Քրիստոսի մեծախորհուրդ եւ սքանչելի ծննդեան առիթով, հոյակապ հանդէս:

նարկին ներկա չէին ծնողները, որպէսզի իրենց աչքով տեսնեն իրենց սիրունատես փոքրիկներուն ելոյթները:

Վարժարանի տնօրէնուհին՝ Տիկ. Անահիտ Խաչատուրեան, թէ հանդէսը վարողն էր եւ թէ ամէն ինչին հասնող եւ վագող անձն էր, որպէսզի հանդիսութիւնը կատարեալ ըլլայ եւ իրապէս ալ այդպէս եղաւ, անթերի եւ հոյակապ ելոյթներ ունեցան մեր ձագուկները:

Ինչպէս ըսինք, աշակերտները նուազագոյն 88 երգ եւ արտասանութիւն կատարեցին այդ օր: Եւ մենք հիացած էինք թէ ուրկէ՞ գտած են այդ բոլոր արտասանութիւնները եւ խօսքերը: Մեր երիտասարդ ուսուցչուհիները օրեր շարունակ փնտռութեան ըրած են Google-ով այդ երգերը եւ արտասանութիւնները գտնելու համար: Այդ օր Իրաքահայերու Ընտանե-



վարժարանի աննման տնօրէնութիւնը, շնորհաշատ ուսուցչուհիները միայն քանի մը շաբաթներու ընթացքին պատրաստած էին այս փառաւոր հանդէսը: Այդ օր, հանդիսութեան սրահը եւ բոլոր դասարանները շատ գեղեցիկ ձեւով զարդարուած էին տօնական օրերու պատշաճ նկարներով եւ զարդերով:

Առաւօտեան ժամը 10:00-ին վարժարանի 88 աշակերտ-աշակերտուհիները դասարան առ դասարան հանդիսասրահ մտան տօնական օրերու խմբերգներու կըրտիներու վրայ:

Ապա աշակերտութիւնը դասարան առ դասարան ելոյթ ունեցան: Երեւակայեցէք վարժարանի 88 աշակերտ-աշակերտուհիները, բոլորը անհատապէս եւ խմբային բազմաթիւ արտասանութիւններ կատարեցին, թնդացնելով սրահը, իրենց մանկական գեղեցիկ կատարումներով: Դժբախտաբար, ձեռ-

կան Շաբաթօրեայ վարժարանի դպրոցաչէնքը, մեր փոքրիկներու կատարումներով փոքրիկ Հայաստան մըն էր:

Տնօրէնուհին՝ Տիկ. Անահիտ Խաչատուրեան իր կողքին ունեցող ուսուցչուհիներ Սուսանա Դաւթեան, Տիկ. Տաթև Կարապետեան, Տիկ. Նելլի Մետոյեան, Տիկ. Լուսինէ Պալուրթեան եւ Տիկ. Թագուհի Կարապետեան իրենց հերթապահներով մեղուաջան աշխատանք տարած էին, որոնց համար սրտանց կը շնորհաւորենք անոնց, մաղթելով որ նման երիտասարդ տիկիներու ներկայութիւնը անպակաս ըլլայ հայ ընտանիքներէն, մեր ազգէն ու հայրենիքէն:

Վերջապահութեան հասաւ Ձեռն Պապիկը (Կաղանդ Պապան) ծանրաբեռնուած իր նուէրներով, երգով, պարով շախով ու շուխով

«Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցը Եւ Արդի Սփիւռքահայ Կրթութեան Մարտահրաւերները



ԱՐՓԻ ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՅՆՈՒ

Ներհայեցողութեան, ինքնաճանաչման, արմատներին մօտենալու իւրաքանչիւր փորձ բարդ, երկարատեւ ու դժուարին ընթացք է ենթադրում: «Ծանիր գրեզ»ը յորդորում է հինաւուրց ասոյթը, բայց ինքնաճանաչման դժուարին ճանապարհին պարտաւոր են ճանաչել նաեւ քեզ նման շատ ու շատ ուրիշներին, այլապէս այդ ընթացքը կանգ կ'առնի կէս ճանապարհին, կը մնայ թերի ու կիսատ, թէեւ առանց դրանց էլ աշխարհում ոչ ոք չի կարող պնդել հաստատապէս, թէ՛ արդէն վերջ, ինքն իրեն ճանաչում է ամբողջովին: Բայց էլի, ինչ էլ լինի, գոնէ հոգեկան շրջադարձի, արմատներին թէկուզ փոքր-ինչ մերձենալու պահանջ-թելադրանքն է, որ մարդ պիտի քննի նաեւ իր նման ուրիշներին: Ամէն մարդ չի կարող ճանաչել ինքն իրեն, մանաւանդ կորցրած ու երկներում քնած արեան ըջիջները: Դրա համար կրթութեան ու զարգացածութեան որոշակի մակարդակ է հարկաւոր, որոշակի փորձ ու գիտելիքներ են պէտք եւ այդ պատուանդանին բազմած քննախոյզ հայեացք:

Այդ քննախոյզ հայեացքը ստեղծում է աստիճանաբար՝ սկզբում ընտանիքում, ապա դպրոցում, երբ փոքր են, բայց հասկանում են, որ բացի ամերիկեան բարձրից, որ հանդիպում են ամէնուրեք, կայ նաեւ մէկ ուրիշը՝ ազգայինը: Այս է պատճառը, որ ժամանակակից ամերիկեան կեանքում իր ուրոյն տեղն ունի ազգային ինքնութեան եւ որոշակիացման որոնումը, ինչը դժուարին եւ ներքին հակասութիւններով լի ճանապարհ է, քանի որ Ամերիկան, հանդէս գալով իբրեւ նոր մշակութային տարածք, պարունակում է բազմազգ հանրութիւն՝ իւրօրինակ մշակութային ավանդոյթներով, անցած պատմական ուղիով եւ ազգային մտածելակերպով՝ միաժամանակ առաջ բերելով ազգային երկուութեան խնդիրը՝ նոր ամերիկեան եւ ազգային-ծագումնաբանական:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու հայ համայնքի ինքնութեան պահպանման եւ զարգացման համար կարեւոր դեր են կատարում հայկական մշակութային կենտրոնները, ակումբները եւ դպրոցները, որոնք տարիներ շարունակ գործում են Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքոյ: Արեւմտեան թեմի ղեկավարութեան տակ կան երկու

տասնեակից աւելի եկեղեցիներ, որոնք հովանաւորում են հայկական դպրոցները, շաբաթօրեայ եւ կիրակնօրեայ վարժարանները, որտեղ արդէն կրթութիւն են ստանում ամերիկահայերի 3րդ, 4րդ սերունդները: Եթէ ամերիկաբնակ հայերի 1ին եւ 2րդ սերունդները պահպանում էին հայ լինելը՝ անմիջականօրէն շփուելով անցեալի կրողների եւ իրենց յուշերը եւ յոյզերը փոխանցողների հետ, ապա առաւել դժուարանում է այդ գործընթացը հայերի 3րդ եւ 4րդ սերունդների համար, քանի որ նախկինում գոյութիւն ունեցող գագաթնակէտները իր տեղը գիշեր է՝ դառնալով միայն գոտ պատմական իրադարձութիւն: Իսկ այդ սերունդների ներկայացուցիչներն ապրում են ամերիկեան իրականութեան մէջ, յաճախում են ամերիկեան հանրակրթական դպրոցներ, շփուում են տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ: Այս երեխաները ճակատագրի բերումով դատապարտուած են ունենալու երկու աշխարհ՝ իրական, որն արտացոլում է առօրեային մէջ, արտաքին «ես»ի դրսեւորմամբ, եւ երեւակայական՝ ենթագիտակցական, այլ աշխարհի հետ ներքին յոյզերով ու հակասական ազդանշաններով լեցուն: Եւ այստեղ ազգապահպանութեան միակ գրաւականը դառնում է հայկական դպրոցը: Այս է պատճառը, որ աշխարհի բոլոր ծագերում, որտեղ հայեր կան, գոյութիւն ունեն նաեւ հայկական կրթօջախներ: Այդպիսի մի հաստատութիւն է նաեւ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր տաճարի «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցը: Ընտրեալ, գրաւիչ ու հնչեղ անուանում, որ անընդմէջ հնչում է մօտ 20 տարի: Այն հիմնադրուել է 2000ին:

2010ին, Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութեամբ նա վերակազմաւորուել է եւ շարունակում է գործել առաջնորդանիստ Ս. Ղեւոնդեանց մայր տաճարի հովանի ներքոյ:

Այս տարի «Փոքրիկ Հրեշտակներ» դպրոցը կրկին իր դռներն է բացել հայ երեխաների համար, ուր սովորում են ոչ միայն գրել կարդալ, հայերէն հաղորդակցուել, այլեւ հայ գրականութեան եւ պատմութեան, երգ ու երաժշտութեան շնորհիւ ծանօթանում են հայոց մշակոյթին:

ՄԱՅԱԶԳ



ԶԱՐՈՒՀԻ ՀԱՄԱԼԵԱՆ (Ծննդալ Եղապետ, 1934 Հայկապ)

Սրտի դառն կակիծով կը գոլժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր, քրոջ, խնամիրին եւ հարազատին՝ ԶԱՐՈՒՀԻ ՀԱՄԱԼԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 13 Դեկտեմբեր 2021-ին:

Յուզարկաւորութիւնը եւ թաղումը պիտի կատարուին Երկուշաբթի, 10 Յունուար 2022-ին: Եկեղեցւոյ կարգը պիտի կատարուի Վէն Նայտի Սուրբ Պետրոս Եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys, CA 91406 Ժամը 12:00-ին, իսկ թաղումը՝ Հոլիվուտ Հիլզի Forest Lawn գերեզմանատան մէջ, 6300 Forest Lawn Drive, Los Angeles, CA 90068 Ժամը 1:30-ին:

- Սգակիրներ՝
- Դուստրը՝ Լինա եւ Յակոբ Արսլանեան
- Դուստրը՝ Անի եւ Արա Ֆերմանեան
- Որդին՝ Գուրգէն եւ Ռիթա Համալեան
- Թոռնիկները՝ Թալին Արսլանեան, Արմէն Արսլանեան, Ճուլիա Համալեան եւ Գլորի Համալեան
- Հանգուցեալ եղբօր՝ Տէր եւ Տիկին Յարութ Եղապետի գաւակները
- Եղբայրը՝ Տէր եւ Տիկին Վարդան Եղապետի եւ գաւակունք Քոյրը՝ Տիկին Վարդուհի Մարտիրեան եւ դուստրը
- Եւ համայն Համալեան, Եղապետեան, Արսլանեան, Ֆերմանեան, Չաւարեան, Արոյեան, Չինչինեան, Ճէպէճեան եւ Ներսոյեան ընտանիքները:

Փոխան ծաղկեպակի նուիրատուութիւնները կը ինդրուի կատարել ՀԲԸՄ-ի Մանուկեան Տեմբրեան Վարժարանի AGBU MDS Soccer Field Fund-ին, հասցէն՝ AGBU MDS School, 6844 Oakdale Ave, Canoga Park CA 91306-3913:


ԻՆՅՈՒ Է ՔՈՇԱՐԵԱՆԸ ԼՈՒՄ

Շարունակուած էջ 2-էն

Ազմկայարոյց ու հանրային մեծ ռեզոնանս առաջացած այս կէտը տարածաշրջանում բոլոր տնտեսական եւ տրանսպորտային կապերի ապաշրջափակմանն է վերաբերում, որի տողատակերում ընդդիմութիւնը ամէն կերպ փորձում էր եւ է գտնել «Զանգեզուրի միջանցքի» մասին Ատրպէյճանի առաջ քաշած նարատիւրը: Ակնյայտ է, որ նախկին նախագահը միտումնաւոր է անտեսում 9-րդ կէտը՝ այն դասելով արդէն կատարուած կէտերի թուին, քանի որ, եթէ դրա շուրջ իր հետ բանավէճ սկսուի, կը պարզուի, որ իր նախագահութեան օրօք էլ՝ 2000թ.-ից ի վեր, ԼՂ կարգաւորման բանակցային գործընթացի քննարկուած տարրերից մէկն էլ եղել է Մեղրիով Ատրպէյ-

ճանին «սովորեան միջանցք» տրամադրելու տարբերակը: Մասնաւորապէս Քի Վեսթում մշակուած, փաստաթղթային տեսք ստացած եւ որպէս ոչ պաշտօնական առաջարկներ կողմերին ներկայացուած տարբերակով նախատեսում էր կարգաւորման հասնել միջանցքների ստեղծումով / Լազին, Մեղրի եւ Շուշի/: Դրանցից մէկն էլ մասնաւորապէս Մեղրիով՝ Արաքսի ափով Ատրպէյճանին տրուելիք միջանցքն էր, որն ունենալու էր մօտ 40 քիլոմետր երկարութիւն եւ 8 մետր լայնութիւն, չէր դառնալու Ատրպէյճանի սեփականութիւնը, սակայն միեւնոյն ժամանակ, Ատրպէյճանը այդ միջանցքից ազատ օգտուելու համար Հայաստանին որեւէ տրանզիտային հարկ չէր վճարելու: «Civic.am»

Նոր Ստացանք
Ever Onward «ՕՆ Յառաջ»
 Հեղինակ՝ Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուֆիկեան
 Ծուրջ 145 էջերէ բաղկացած այս երկը հատորին մէջ լոյս տեսած են հեղինակի շահեկան յօդուածներն ու մտորումները:
 Վեր. Դոկտ. Յ. Թուֆիկեան հեղինակ է նաեւ 45 այլ հատորներու: «Օն Յառաջ»ը նոր տարուան սեմին լոյս տեսած առաջին գիրքն է մեր գաղութէն ներս:



Իրաքահայ Ընտանեկան Միութեան

Շարունակուած էջ 14-էն

Հանդիսարահ մտաւ աշակերտութեան լիաթոք բացազանչութիւններով եւ երգերով դիմաւորուեցաւ: Աշակերտութիւնը Զմեռ Պապիկին հետ հայկական պարեղանակներու եւ երգերու կշռոյթներուն վրայ պարելով, մեծ խանդավառութիւն մը ստեղծուեցաւ սրահէն ներս, որմէ ետք փոքրիկները դասարան առ դասարան Զմեռ Պապիկին մօտենալով իրենց նուէրները ստացան իրմէ:

Հանդիսութիւնը վերջ գտաւ: Բոլոր փոքրիկները անմոռանալի ժամեր ունենալէ ետք, մեկնեցան երեք շաբաթ ետք դպրոց դառնալու համար, հանդիսութեանն էր տնօրէնութիւնը եւ բոլոր ուսուցչուհիները հաւաքուեցան միասին ճաշելու համար, որ պատրաստուած էր տնօրէնութեան եւ ուսուցչուհիներուն կողմէ: Մօտ մէկ ժամ ուսուցչուհիները բաժակաճառքերով, արտասանութիւններով ու շատ

գեղեցիկ երգերու կատարումով, միասնաբար տօնեցին Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:

Մեր սրտագին աղօթքն ու մաղթանքն է, որ դալ տարին, համայն աշխարհի ժողովուրդներուն, բայց մանաւանդ՝ մեր թանկագին մայր հայրենիքին Աստուած խաղաղութիւն պարգեւէ, երջանիկ եւ ուրախ օրեր աշխարհատարած մեր ժողովուրդին, Հայաստանի պետական այրերուն իմաստութիւն տայ, հայրենաբնակ մեր ժողովուրդին ուրախ եւ երջանիկ օրեր պարգեւելու համար:

Մեր դպրոցի բոլոր նուիրեալներուն ուժ եւ կորով շարունակելու ազգակերտման այս սուրբ գործը: Մեր դպրոցի վարչական անդամներուն, տնօրէնութեան, ուսուցչական կազմին, իրենց ընտանիքներուն անամպ երկնքի եւ կանաչ ճանապարհ:

»Քրիստոս Ծնաւ եւ յայտնեցաւ Օրհնեալ է յայտնութիւնը Քրիստոսի«

«Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթեայ

Շարունակուած էջ 14-էն

Ուշագրաւն այն է, որ դպրոցն առաջնորդուած է Հայաստանի Հանրապետութեան հանրակրթական դպրոցների դասագրքերով եւ ծրագրերով, միեւնոյն ժամանակ առաջիկաների դասաւանդումը իրականացուած է կալիֆորնիայի կողմից սահմանուած լեզուների ուսուցման հիմնական չափորոշիչները հիմք ունենալով: Այս գործընթացում իր մեծ ներդրումն ունի դոկտոր էլլի Անդրէասեանը, որը ղեկավարում է թեմի գիտակրթական յանձնախմբի աշխատանքները:

Դպրոցի տնօրէն, բարեշնորհ Յովհաննէս սարկաւազ Գումրույեանի եւ եկեղեցւոյ հովիւ, արժանապատիւ տէր Խաթակ քահանայ Շահբազեանի անձնուրաց աշխատանքի շնորհիւ դպրոցն իր ուրոյն տեղն է գրաւում Լոս Անձելոսում գործող հայկական դպրոցների շարքում: Հարկ է նշել, որ 2015ին Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Հայաստանի սփիւռքի նախարարութեան կողմից դպրոցը ճանաչուել է որպէս Սփիւռքի լաւագոյն շաբաթօրեայ վարժարան:

Իւրաքանչիւր ծնողի համար իր երեխան հրեշտակ է, հայ ծնողի համար՝ առաւելապէս: Իսկ մեր այս կապուտաչեայ, սեւաչեայ, թխահեր ու շիկամազ հրեշտակներին հրեշտակ պահելու համար երկնքից որոշակի յանձնարարութեամբ առաքուած մեծահասակ հրեշտակներ էլ կան, դրանք մեր ուսուցիչներն են, որոնք երկար տարիներ իրենց անմնացորդ նուիրումն են ցուցաբերում՝ հաւատարիմ իրենց առաքելութեանը՝ օտար ափերում հայ երեխային հայ պահելու դժուարին գործին: Դպրոցում հմուտ ուսուցիչներին միջոցով երեխաները կարողանում են ժամանակի եւ տարածութեան միջով անցնելով՝ աշխուժացնել մեր պատմական հերոսներին, ծանօթանալ ժամանակաշրջանին, մթնոլորտին, հայոց մշակոյթին, ազգային ինքնութեան գիտակցութեանը: Քանի որ շատ կարեւոր է մարդու հոգեւոր զարգացումը: Դէպի հայ ժողովուրդն ու Հայաստանը կողմնորոշման եւ աշխարհայեացքի ձեւաւորման եւ գործում, բացի լուսանկերպութեան հայերի հետ շփուելուց, դասագրքերից, կարեւոր խթան են նաեւ

քննարկուող նիւթին վերաբերող այլեւայլ վաւերագրեր՝ լուսանկարներ, քարտէզներ, հայ եւ արտասահմանեան նկարիչների ստեղծագործութիւններ եւ այլն: Այս դպրոցն այն ամուր հիմնաշերտն է, որի վրայ ներդաշնակօրէն խարսխուած են Յրդ, 4րդ, յետագայում էլ շարունակելու են գալիք սերունդներին պատկանող հայերը: Ուսուցիչներն իրենց գործն անում են ինքնամոռաց նուիրումով, ինչի շնորհիւ իւրաքանչիւր հայերեխայ դպրոց է գալիս հաճոյքով ու սիրով:

Կրթօջախում մշտապէս տեղի են ունենում հանդէսներ, մշակութային, ազգային հանդիպումներ: Այդպիսի մի փոքրիկ միջոցաւում էլ կազմակերպուեց 2021ի Դեկտեմբերի 19ին: Սկզբում աշակերտների գալիք Նոր տարին շնորհաւորեց դպրոցի տնօրէն Յովհաննէս սարկաւազ Գումրույեանը, այնուհետեւ առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեանն իր օրհնութեամբ եւ գեղեցիկ բարեմաղթանքներով շնորհաւորեց «Փոքրիկ հրեշտակներ»ի գալիք Ամանորը եւ Սուրբ Ծնունդը:

Կրթօճախ էին եկել նաեւ Զմեռ Պապն ու Ջիւնանուշը, որոնք իրենց երգ ու պարով, նուէրներով ամբողջացրին ցերեկոյթը եւ ուրախացրին դպրոցի աշակերտներին: Վերջիններս նրանց դիմաւորեցին ամանորեայ երգերով եւ շնորհակալական խօսքերով:

Այնուհետեւ յաջորդեց ամանորեայ ճաշկերոյթը, որից երեխաներն աւելի շատ ոգեւորուեցին:

Միջոցաւումներ ներկայ էին նաեւ ծնողները, որոնք ուրախութեան ու հպարտութեան զգացումով էին լցուել: Նրանք գիտակցում էին, որ իրենց ներդրումը հէնց այնպէս չի կորչելու եւ սերնդէ սերունդ պահպանուելու է՝ արեան կանչին հաւատարիմ: Թէ՛ աշակերտները եւ թէ՛ ուսուցչական կազմը որոշ ժամանակով կտրուեցին առօրեայից, գնացին դէպի հրաշք երազների եւ հեքիաթների աշխարհը, որպէսզի նորից կարողանան 2022ի Յունուարի ծից շարունակել իրենց ազգապահպան եւ հայրենանուէր գործունէութիւնը, որը ճախրելու թեւեր կը տայ թէ՛ ուսուցչական կազմին հայկական ոգին վեճ պահելու, թէ՛ աշակերտներին արժանապատիւ եւ յետագայում հայրենիքի համար պիտանի հայ լինելու գործընթացում:

Լեւանդովսկին Երկրորդ Անգամ Անընդմէջ Ծանցուեցաւ Տարուայ Լաւագոյն Ֆուտբոլիստ

Գերմանիոյ ախոյեան «Պայրերն» Միւնխիխ եւ Լեւանդովսկին հաւաքականի յարձակող Ռոբերտ Լեւանդովսկին երկրորդ անգամ անընդմէջ ճանաչուած է տարուայ լաւագոյն ֆուտբոլիստը, բրիտանական The Guardian թերթի վարկածով:



2021-ի աշխարհի լաւագոյն 100 ֆուտբոլիստներու վարկանիշային աղիւսակը կազմուած է 219 փորձագէտներու, որոնց շարքին 24 նախկին ֆուտբոլիստներու քուէարկութեամբ:

Առաջին տասնեակը ունի այսպիսի տեսք.

- Ռոբերտ Լեւանդովսկի («Պայրերն») - 8481 միաւոր
- Լիոնել Մեսի («Պարսեւոնա»/ՊՍՅ) - 7830
- Մոհամետ Սալահ («Լիվերփուլ») - 7589
- Քարիմ Անեզեմա («Ռեալ») - 7214
- Ժորժինիո («Չելսի») - 6859
- Կիլիան Մփապէ (ՊՍՅ) - 6705
- Էրլինգ Հոլանտ («Պորոուսիա Տորտմոնն») - 6696
- Կրիշտիանու Ռոնալդու («Յուվենտուս»/«Մանչեսթըր Եունայթըդ») - 6277
- Նգոլո Կանտէ («Չելսի») - 6181
- Քեւին Եյ Պրոուէ («Մանչեսթըր Սիթի») - 5965

Անգլիոյ Ախոյանութեան Արդիւնքները

Անգլիոյ առաջնութեան 19-րդ հանգրուանին Լոնտոնի «Չելսի» հիւրընկալուեցաւ «Ասթոն Վիլայն»։ Գերմանացի Թոմաս Տուխելի գլխավորած խումբն առաւելութեան հասաւ 3:1 արդիւնքով:

Երրորդ տեղը գտնուող «Չելսի» 41 կէտով հաւասարեցաւ երկրորդ տեղը ընթացող «Լիվերփուլին», որ մէկ հանդիպում նուազ կատարած է:

Ներկայ ախոյեան «Մանչեսթըր Սիթին» ընդունեց «Լեսթեր Սիթին»։ Կատարուեցաւ խոստովանող Գոլաբոլիտայի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 6:3 արդիւնքով եւ 47 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը:

Լոնտոնի «Արսենալը» հիւրընկալուեցաւ 10 միաւորով վերջին տեղը գտնուող «Նորուիչ» կողմէ եւ առաւելութեան հասաւ 5:0 արդիւնքով: «Արսենալը» 35 կէտով 4-րդ դիրքի վրայ է:

«Թոթենհեմ» լոնտոնեան տերպիլի ընթացքին մրցեցաւ «Քրիսթալ Փելասի» հետ: Իտալացի Անտոնիո Կոնթէի գլխավորած խումբը վստահ չաղթանակ արձանագրեց 3:0 արդիւնքով եւ 29 կէտով բարձրացաւ 5-րդ տեղ:

«Ուեսթ Հեմ» 2:3 արդիւնքով պարտուեցաւ «Սաութհեմթընին» եւ 28 կէտով նահանջեց 6-րդ տեղ:

Մեսին, Նեյմարն Ու Սքապեն Տեղ Չեն Գտած Ֆրանսայի Առաջնութեան Խորհրդանշական Հաւաքականին Մէջ

Ֆուտբոլի Ֆրանսայի առաջնութեան 18 հանգրուանէն յետոյ ձմեռային արձակուրդ է: Ախոյեանութեան առաջին մասի արդիւնքներով հեղինակաւոր L'Equipe-ը կազմած է առաջնութեան խորհրդանշական հաւաքականը:

ՊՍՅ-ի աստղային յարձակողներ, արժենթինացի Լիոնել Մեսին, պրագիլացի Նեյմարը եւ ֆրանսացի Կիլիան Մփապէն տեղ չեն գտած լաւագոյններուն մէջ:

Պուֆոն Կը Ցանկայի Տեղափոխուիլ Մեքսիքա Կամ Ամերիկա

Իտալացի նշանաւոր դարպասապահ Զանլուիջի Պուֆոնը խօսած է իր ապագայի մասին: Իտալական «Փարմայի» 43-ամեայ դարպասապահը իր արհեստավարժ կեանքը աւարտելու մասին դեռ չի մտածեր:



«Ես կը ցանկայի տեղափոխուիլ Մեքսիքա կամ ԱՄՆ եւ այնտեղ խաղալ ֆուտբոլ: Այդ տպաւորութիւններն ու յոյզերը ինձի տակաւին կը հետաքրքրեն, բայց տեսնե՞ք, թէ ինչ կ'ըլլայ յետագային: Մարզիչ դառնալու վերաբերեալ որոշում չկայ, չեմ գիտեր՝ կը դառնամ, թէ ոչ: Ես միշտ կը ցանկամ գարգանալ: Գործիս ընթացքին Ախոյեաններու Լիգայի գաւաթը այդպէս ալ չնուաճելը կը պահպանէ մրցակցութեան ոգին: Հնարաւոր է՝ եթէ ունենայի այդ գաւաթը, արդէն

«Լիվերփուլը» Պատրաստ Է Սալահին Շարքական Կէս Միլիոն Ստերլին Վճարելու

«Լիվերփուլը» ակումբը յոյս ունի երկարաձգել պայմանագիրը եգիպտացի յարձակող Մոհամետ Սալահի հետ: 29-ամեայ ֆուտբոլիստի համաձայնութիւնը ստանալու համար անգլիական ակումբը պատրաստ շաքարական 500 հազար ստերլին (592 հազար եւրօ) աշխատավարձ վճարելու:



Եթէ այս կէտը հաստատուի, ապա Սալահ կը դառնայ այդքան բարձր աշխատավարձ ունեցող առաջին ֆուտբոլիստը Փրեմիեր Լիգայի պատմութեան մէջ:

Ընթացիկ մրցաշրջանին Սալահը «Լիվերփուլի» հետ բոլոր մրցաշարերու ընթացքին մասնակցած է 24 հանդիպման, նշանակած է 22 կոլ, կատարած 9 կոլային փոխանցում:

Սալահի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2023-ի Յունիս:

Հայաստանի Հաւաքականը Տարին Աւարտեց 92-րդ Տեղը, Առաջատարը Պելճիքան Է

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան հրապարակած է ազգային հաւաքականներու դասակարգման աղիւսակը՝ վերջինն աւարտող տարին: Հայաստանի հաւաքականն սպանացի խոսակին կապառուսի գլխավորութեամբ տարին կ'աւարտէ 92-րդ տեղը:

2020 թուականը Հայաստանի հաւաքականն աւարտած էր 99-րդ տեղը:

Առաջատարը Պելճիքայի հաւաքականն է: Լաւագոյն տասնեակին մէջ են նաեւ Պրագիլը, Ֆրանսան, Անգլիան, Արժենթինը, Իտալիան, Սպանիան, Փորթուգալը, Դանիան ու Հոլանտան:

Մատրիտի «Ռեալը» Մտադիր Է Գնել Արսէն Զախարեանին

Մատրիտի «Ռեալը» կը ցանկայ գնել Մոսկուայի «Տինամոյի» եւ Ռուսաստանի հաւաքականի կիսապաշտպան Արսէն Զախարեանին: Արքայական ակումբի ներկայացուցիչներն արդէն նախնական աշխատանք են կատարել այդ ուղղութեամբ, կը հաղորդէ championat.com-ը:



Սերպ գործակալ Սրջան Երեմիչն ու մատրիտեան խումբի խորուաթ կիսապաշտպան Լուկա Մոտրիչի ներկայացուցիչ Վլադօ Լեմիչը այցելած Մոսկուա եւ այդ հարցի շուրջ զրուցած՝ «Տինամոյի» մարզական տնօրէն, պոսնիացի Ժելչօ Բուվաչի հետ:

«Ռեալը» կը ցանկայ Զախարեանին ձեռք ձգել յաջորդ ամրան: Տեղափոխման գումարը կրնայ կազմել 20-25 միլիոն եւրօ:

Ընթացիկ մրցաշրջանին 18-ամեայ Զախարեանը 18 խաղի ընթացքին նշանակած է 4 կոլ, կատարած 7 կոլային փոխանցում:

Սամուէլ Տեր-Սահակեանը Ոչ Ոքի Խաղաց Մակնուս Կարլսընի Հետ

Վարչավայի մէջ տեղի ունեցող արագ ճատրակի աշխարհի առաջնութեան երկրորդ հանգրուանին Հայաստանի ներկայացուցիչ Սամուէլ Տեր-Սահակեան սպիտաներով ոչ ոքի խաղաց աշխարհի ախոյեան Մակնուս Կարլսընի հետ:



65-րդ քայլի ընթացքին աւարտած խաղատախտակին մնացին միայն արքաները:

Առաջին հանգրուանին Սամուէլ Տեր-Սահակեանը սեւերով պարտութեան մատնեցած էր լեհ Եոնա Պաուսին:

Հայաստանի ներկայացուցիչներէն 1,5-ական միաւոր ունին նաեւ Սերգեյ Մովսէսեանը, Ռոբերտ Յովհաննիսեանը, նաեւ առաջին անգամ ԱՄՆ-ը ներկայացնող Լեոն Արոնեանը:

աւարտած կ'ըլլայի մարզական կեանքս», ըսած է Պուֆոն: Պուֆոն Իտալիոյ հաւաքականի հետ դարձած է 2006-ի աշխարհի ախոյեան: